

869-6

Հ.Կ. (թ) Կ.Կ.Կ. ԲԱՆԳԵԳԱԶԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ №11

≡ՆՅՈՒԹԵՐ≡

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈ-
ՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ 1926-27 Թ.

≡ԾՐԱԳՐԻ≡

ՅԵՐԵՎԱՆ - 1927




Հ.Կ. (թ) Կ.Կ. Կ. ԲԱՆԳԵՂԶԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ №11

396 (Կ7)

≡ՆՅՈՒԹԵՐ≡

ԻԵՂԶԿՈՒՀԵՐԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈ-
ՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ 1926-27 թ.

≡ԾՐԱԳՐԻ≡



ՅԵՐԵՎԱՆ - 1927

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՄԱՐԱՆ

ԳՐԱՓ. 891 Բ.

ԹԱՏՎ. 1074

ՏԻՐԱԳ. 1200



ՃՐԱԳՐԱՅԻՆ ՆՑՈՒԹԵՐ

ՆՑՈՒԹԵՐ Ա.ՌԱԶԻԿԻՆ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Խորհրդային իշխանությունը աշխատավորության մեջ սեռերի տարբերություն չի դնում։ Աշխատավորության այն խավերը, վորոնք ցարիզմի ժամանակ ավելի ճնշված են յեղել, վորոնց թվում և գեղջկուհին, Խորհրդային իշխանության հիմնական սկզբունքն են նրանց շահերի պաշտպանության խնդիրը։

Գեղջկուհին՝ խորհրդային յերկրում, գյուղացուն հավասար չափով ողտվում ե քաղաքական և ստացվածքային իրավունքներից։ Խորհրդային իշխանությունը տալով մեծ նշանակություն գեղջկուհու մասնակցությանը գյուղատնտեսության մեջ, հատուկ որենքների և կարգադրությունների միջոցով նրա իրավունքների մասին հիշեցումներ ե անում։

Բոլորովին այլ կերպ եր ցարիզմի որով։ Ցարիկալվածատիրական իշխանության սկզբունքն եր. «խփիր և ճնշիր թույլերին»։ Ճորտության և ճնշումների յենթակա յեր բանվորը և գյուղացին,

բայց կինը՝ մանավանդ գյուղում, կրկնակի ճորտ եր. Նրա վրա բարդում եյին ամենածանր աշխատանքները և դրկում բոլոր իրավունքներից ինչպես հասարակական նույնպես և ընտանեկան: Գույքերի վերաբերյալ կարգադրություն անողը տղամարդ տանտերն եր: Հակառակ կնոջ ցանկության՝ նրան բռնի կերպով կապում եյին ամուսնու հետ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերացրեց կնոջ իրավազրկությունը:

Չնայած այն հանգամանքին, վոր գեղջկուհին Հոկտեմբերյան հեղափոխության առաջին որերից ստացել ե քաղաքական իրավունքներ, այն եւ—կարող ե ընտրել և ընտրվել գյուղ-խորհուրդում և խորհրդային այլ ընտրովի մարմիններում և մինչև կենտղործկոմի անդամ լինել (համաձայն հիմնական որենքի—կոնստիտուցիայի 64-րդ հոդվածի, վորտեղ ասվում ե, վոր բոլոր աշխատավորները, առանց սեռի խարության, 18 տարին լրացնելուց հետո կարող են ընտրել և ընտրվել), այնուամենայնիվ գեղջկուհիները չառ քիչ թիվ են կազմում խորհուրդներում:

Համառուսական յերկը գումարման կենտգործկոմի յերկը նստաշրջանը՝ հատուկ վորոշմամբ տեղական իշխանությունների ուշադրությունն ե հրավիրել այդ խնդրի վրա:


Կոմկուսակցության 13-րդ համագումարը ցույց տվեց գեղջկուհու մասնակցության անհրաժեշտությունը. «մեծ թափով և անընդհատ գեղջկուհուն քաշել բոլոր ընտրովին պաշտոնների մեջ խորհրդային գծով, արհմիության, կոռապերատիվ և այլ տընտեսական կազմակերպությունների մեջ և պատրաստել աչքի ընկնող գեղջկուհիներին պատասխանատու աշխատանքների համար»: (13-րդ կուս. համագումարի բանաձեից):

Համառուսական կենտրոնական Գործադիր կոմիտեն առաջարկեց. «միջոցներ ձեռնարկել գեղջկուհուն և բատրակուհուն հասարակական կյանքին մասնակից դարձելու, ընտրելով նրանցից առաջադեմներին գյուղխորհուրդների և շրջգործկոմների անդամ»: (Նոյեմբեր 1924 թ.):


«Այն որենքները, վորոնք կնոջը պահում եյին կախյալ վիճակի մեջ, միշտ հպատակության մեջ, խորհրդային պետության որով քարը-քարին վրա չմնացին: Յես խոսում եմ այն որենքների մասին, վորոնցով հատկապես ողտադործում եյին կնոջ թույլ վիճակը, դնելով նրան անհավասար իրավունք ունեցողի և հաճախ նույնիսկ ստորացնող վիճակի մեջ»: (Լենին):

Սկզբից ել մեր կուսակցությանը բոլորովին պարզ եր, վոր այդ որենքները կյանքի մեջ կիրառելը դժվար և լինելու: «Ի հարկե, բավական չե մի-

ԿԱՌԱՅԻ ՊԻՎԸ
ԵՐԶԳՈՐԾՎՈՒՅՑԻՆ




1924-25.




1925-26.

ԿԱՌԱՅԻ ՊԻՎԸ
ԳԱՎԱՐԾՎՈՒՅՑԻՆ



1924-25.



1925-26.

այն որենքներ հրատարակելը, և մենք վոչ մի դեպքում չենք բավարարվում միայն դեկրետներով։ Որենսդրության ասպարիզում մենք արել ենք այն ամենը, ինչ վոր մեզանից ոլահանջվում եր կնոջ դըրությունը հավասարեցնել տղամարդուն՝ և մենք իրավունք ունենք դրանով հպարտանալու։ Այժմ Խորհրդային յերկրում կնոջ դրությունը իդեալական և (կատարելագործված և) քան ամենաառաջամոր պետություններում։ Բայց մենք ասում ենք, ի հարկե այս դեռ սկիզբն ե»։ (Լենին) :

Խորհրդային իշխանությունը, գեղջկուհու հավասար իրավունքները կյանքի մեջ կիրառելու համար, հանդիպել և և հանդիպում և այժմս ել մեծ դժվարությունների։ Դեռ այժմս ել դրույցիների կողմից հաճախ անբարեհաճ վերաբերմունքի կարելի յե հանդիպել դեպի գեղջկուհիները նրանց մասնակցելուն հասարակական աշխատանքներին (կյանքին)։ Ցարիզմը շատ ուժեղ կերպով խցկել ե բոլորի գլխում, վոր կառավարել և ողտվել բոլոր իրավունքներից կարող են միայն կրթվածները, հաւրուստները։ Իսկ կնոջ մասին միայն ասվում երամաղը յերկար, խելքը կարճ» և այլն։ Կնոջը դրել-կարդալ չեյին սովորեցնում, պահում եյին մթության մեջ, և նա շատ դեպքերում չեր ճանաչում իր իրավունքները, և չի յել ողտվում մինչեւ հիմա։

«Գլխավորն ու հիմնականը բայլշելիզմում և ռուսական Հոկտեմբերյան հեղափոխության մեջ այն ե, վոր պետք ե քաղաքականության մեջ քաշել հատկապես նրանց, ովքեր կապիտալիզմի ժամանակ ամենաճնշվածներն են յեղել: Նրանց ճնշում եյին, նրանց խարում եյին, նրանց կեղեքում եյին կապիտալիստները, և այդ ճնշումը, հարստահարումն ու խարեբայությունը ժողովրդի աշխատանքի, անխուսափելի յեր, քանի գոյություն ուներ գործարանների, դավոդների և հողի մասնավոր սեփականությունը»: (Լենին):

Դեղնկուհու վոչ միայն քաղաքական այլ և ստացվածքային շահերը պահպանված ե հողային որենսգրքով: «Հասարակության հողաբաժանման ժամանակ, համայնական հողն ոգտագործման դեպքում, հողամասերը բաժանվում են ծուխի անդամներին բաշխման միավորի չափով. մնացած բոլոր պարագաներում գոյություն ունեցող սովորության համեմատ, յեթե այդ չի հակասում որենքին: Այդ բոլոր բաժանման դեպքերում ծուխի անդամների մեջ սեռի տարրերություն չի դրվում, տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունք»: (Հողային որ. 84-րդ հոդ.):

«Հողային որենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն, հողից ոգտվելու, տնտեսությունը վարելու համար, իրավունք ունեն առանց սեռի, կրոնի և

աղջության խտրության խորհրդային յերկրի բոլոր քաղաքացիները։ Հետևաբար կինը տղամարդուն հավասար իրավունք ունի հողից ոգտվելու։ Նա կարող է կամ ինքնուրույն վարել տնտեսությունը, կամ մտնել դյուղացիության ծուխի մեջ (Հողաշինարարութ. ժամանակ և այլն)։ Գեղջկուհին այժմս տղամարդուն հավասար մասնակցում է հողային հանձնաժողովներին։

Ամուսնական—ընտանեկան իրավունքի մեջ պահպանված է դեղջկուհու շահերը վորպես մոր։ Խորհրդային իշխանությունը, վոր Յեվրոպայի ամենահետամնաց յերկրներից մեկն է, ինոչ ազատադրման համար, նրան հավասարեցնելու «ուժեղ» սեռին արեց այնքան, վորքան 130 տարվա ընթացքում չելին կարող աշխարհի բոլոր առաջավոր, լուսավորված և դեմոկրատիկ հանրապետությունները միասին։ «Լուսավորություն», «ազատություն», այդ փոքուն բառերը միանում են բոլոր կապիտալիստական—բուրժուական հանրապետություններում հըրատարակվող անասելի ստոր, զզվելի և գաղանային կոպտությամբ լցված որենքներում, ո՞ւր կա կնոջ անհավասար իրավատիրոջ, ամուսնական իրավունքի, ամուսնալուծության իրավունքի, ամուսնությունից դուրս ծնված յերեխայի իրավունքի անհավասարության «իրավամբ ծնվածների» հետ, տղա-

մարդկանց արտոնությունների մասին և նրա դիմաց կնոջ ստորացման և նսեմացման մասին:

Խորհրդային Հանրապետությունը՝ բանվորների և զյուղացիների հանրապետությունը, այդ բոլոր որենքները վերացրեց միանգամից և չթողեց բուրժուազիայի ստի և յերեսպաշտության կառուցվածքը քարը քարի վրա: (Լենին, յերկերի ժող. հատոր 16-րդ յերես 363—364):

Ամուսնական—ընտանեկան որենսդիրքը կառուցված և ամբողջովին սեռերի իրավահավասարության սկզբունքի հիմունքներով, պաշտպանելով ավելի թույլ կողմի իրավունքները—մոր և մանկան (հավասար իրավունքներ մոր և հոր կողմից մանկան վերաբերմամբ, ապրուստի միջոց յերեխայի համար ամուսնալուծության դեպքում, ամուսնալուծության իրավունք, միասին ձեռք բերած դույքի ընդհանրության, ողնության խնդիրը գործազրկության և հիվանդության դեպքում ունեոր ամուսնու կողմից, անիրավամբ ծնված յերեխայի հակացողության վերացումն և այլն):

Խորհրդային իշխանությունը հաշվի յե առնում, վոր գեղջկուհուն խանդարում և հետ և պահում հասարակական—քաղաքական աշխատանքներից նրա յերեխաները և տնային տնտեսությունը: Այժմս մեծ ուշադրություն է դարձվում յերեխաների մսուրների և մանկական հրապարակների կազմակեր ման վրա

և մեխանիզացիայի յենթարկելու գեղջկուհու աշխատանքը:

ՆՅՈՒԹԵՐ 2-ՐԴ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Գյուղխորհուրդը ղեկավարում է գյուղի տնտեսական և կուլտուրական կյանքը:

«Գյուղխորհուրդը, հանդիսանալով իր սահմանաբառում իշխանության ներկայացուցիչ, ունի գլխավորապես լուծելու հետեւյալ խնդիրները՝ գյուղացիության տնտեսության բարձրացում, պայքար տղիտության և խավարի ղեմ, հիվանդությունների և այլ գյուղական նորմալ կյանքին խանդարող հանգամանքների վերացման, աշխատավորության շահերի պաշտպանությունը—բանվորի և գյուղացու դաշինքի հիման վրա, ճիշտ կերպով, բանվորագյուղացիության կառավարության որենքների կիրառումը կյանքի մեջ, վորոնք նպատակ ունեն աշխատավորության կյանքի բարելավումը, լայն մասնակցությունը գյուղացու և գեղջկուհու կողմից կապահովի պետության ղեկավարման խնդրում ընդհանրապես պետական ապարատի լավացման խնդիրը կիրառելը»: (Նոր կանոնադրություն Գյուղխորհուրդների համար):

«Գյուղխորհուրդները և շրջգործկոմները պետության կառուցվածքի հիմնական մասերն են, նրանք ծառայում են և վճռում վոչ միայն տեղական


նշանակություն ունեցող խնդիրներ, այլ և խնդիրներ, վորոնք վերաբերում են պետության ընդհանուր կարգին»։ (Կաղանովիչ, Գյուղխորհուրդների աշխատանքների բարելավումը)։

«Պետք ե հասնել այն դրության, ասում ե Հ.Ս.Խ.Մ.-ի կենտղործկոմի կից խորհրդակցության մասնակցողներից մեկը, վորապեսզի Խորհուրդը գյուղի հասարակական կյանքի կենտրոնը դառնա։ Մենք ունենք գյուղում յերեք կարգի կազմակերպություններ։ առաջինը՝ խորհուրդներն են, յերկրորդը՝ կոոպերացիան և փոխողնության կոմիտեները և յերրորդ կարգի հասարակական կազմակերպություն ե ՄՈՊԲ-ն և այլն։ Այս կարգին են պատկանում և կուլտ-կրթական կազմակերպությունները։

Զհրամայելով նրանց, չստանձնելով խնամակալմի դերը նրանց վերաբերմամբ, պետք ե վոր խորհուրդը լինի այդ կազմակերպությունների ուժերի միացնող և նրանց ողնող կենտրոնը»։ (Կաղանովիչ Գյուղխորհուրդների աշխատանքների բարելավումը)։

Վորապեսզի գյուղխորհուրդը կարողանա իր այս բոլոր խնդիրները իրագործել, անհրաժեշտ ե ,վոր ամենաակտիվ գյուղացիներն ու գեղջկուհիները մասնակցեն գործնականապես նրա բոլոր աշխատանքներին, վորապեսզի այդպիսով մասնակցած լի-

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՋԱԿԱՐԱԳՐԻ ԱՌԱՋԱԿԱՐԱ



նեն իրենց գյուղի, ըրջանի և պետության կառավարման մեջ:

«Խորհրդային իշխանությունը կարող է հրաշք-ներ դործել, վորով միանգամից, մի զարկով տաս-նապատկում ե մեր պետական ապարատը՝ այնպիսի միջոցներով, վոր վոչ մի կապիտալիստական պե-տություն չի ունեցել և չի ել կարող ունենալ։ Այդ հրաշալի դործ ե—դրավել աշխատավորությանը, դրավել չքավորությանը պետության ամենորյա կա-ռավարման դործում»։ (Լենին)։

Լենինը սովորեցնում եր, վոր յուրաքանչյուր աշխատավոր իին պիտի սովորի զեկավարել իր պե-տությունը։ «Այն դասակարգերի կազմակերպումը, վորոնք ավելի ճնշվել են կապիտալիստների կողմից, այսինքն՝ բանվորներն ու գյուղացիները հանդիսա-նում են մշտական և դործնական հիմքն ամբողջ պե-տական իշխանության»։ (Լենին)։

«Իսկ մասսային չի կարելի քաղաքականության մեջ քաշել՝ առանց կողմանակցության»։ (Լենին)

Յարի ժամանակ գյուղը կառավարում ելին ուրիադնիկները, զեմստվոյի նախարարները, վո-րոնք հանդիսանում ելին ցարի և կալվածատերերի իշխանության հնագանդ և նվիրված ներկայացու-ցիչները։

«Գյուղական ժողովներին ընտրվում ելին գյուղական տանուտեր ավագներ, վորոնք բացար-

ձակագես—ամբողջովին հպատակվում եյին կալվածատերերին՝ հանձինս դեմստվոյի նաչալնիկի, վորը իշխում եր գյուղական ժողովին, տանուտերին և ավագին այնպես, ինչպես պահանջում եր կալվածատերերի շահերը։ Պրիստավը և ուրիաղնիկը նրա գլխավոր ոգնականներն եյին։ Ավելորդ ե խոսել, վորովհետեւ այդ՝ բոլորը հիշում են, վոր տանուտերը և ավագը լինում եյին մեծ մասամբ հարուստ և կուլակ գյուղացիության ներկայացուցիչները, վորոնք իրանց շահերով շատ մոտ եյին կանգնած կալվածատիրոջ շահերին։ Գյուղը կամ շրջանը՝ կրթական, տնտեսական և մանավանդ քաղաքական խնդիրներին անդիտակ եր։ Այդ իշխանությունը գլխավորապես վոստիկանության իշխանություն եր, իշխանություն, վորը զբաղված եր միայն գյուղացիներից հարկ հավաքելու և տուղանման խնդրով։ (Կաղանովիչ, «Պյուղիւռըհուրդների աշխատանքների բարելավման մասին»)։

Այժմ գյուղում խորհուրդների մեջ նստած են աշխատավորները—բատրակները, չքավորները և միջակ գյուղացիները։ Նրանց հանձնված ե ամբողջովին իշխանության ղեկը, նրանք են լուծում տեղային և համապետական նշանակություն ունեցող խնդիրները։

Չեն ընտրում և չեն կարող ընտրվել խորհրդի անդամ։

ա) Այն անհատները, վորոնք վարձու աշխատանքից ոգտվում են՝ շահ ձեռք բերելու համար:

բ) Այն անհատները, վորոնք անաշխատ յեկամուտ ունեն, որ դրամագլուխի շահ են ստանում, ձեռնարկությունից յեկամուտ են ստանում, գույքերից մուծումներ և այլն.

գ) Մասնավոր առևտրականները և առևտրական միջնորդները.

դ) Բոլոր հոգեւորականները և կրոնի այն ծառայողները, վորոնց համար այդ զրադմունքը դառել ե մասնագիտություն.

յե) Վոստիկանության ծառայած բոլոր անհատները, վորոնք ժանդարմերիայի մեջ են յեղել, ցարի ընտանիքի անդամները, վոստիկանության զեկավարները և այն անհատները, վորոնք պատժիչ մարմիններում են աշխատել.

զ) Զեն կարող մասնակցել նրանք, վորոնք ճանաչված են վորպես հոգեկան հիվանդներ կամ խելագարներ.

ե) Անհատներ, վորոնք դատվել և դատապարտվել են շահախնդրական և վարկարեկող հանցագործության համար:

Քաղաքներում և գյուղերում կան բանվորների գյուղացիների և կարմիր բանակի ներկայացուցիչներից կազմված խորհուրդներ:

«Խորհրդային իշխանությունը պաշտպանում է

միայն բանվորին, գյուղացուն՝ չքավորին ու մի-
ջակին։ Ամբողջ պետության կառուցվածքի մեջ
խորհուրդները հենվում են իրենց ընտրողների վրա
և սերտ կերպով կապված են նրանց հետ»։

Խորհրդային իշխանությունը—բանվորների և
գյուղացիների դաշինքն ե։

«Մեր յերկրի ազգաբնակության մեծագույն
մասը կազմում ե գյուղացիությունը, և մեր գյուղա-
վոր խնդիրն ե ստեղծելու ուղիղ փոխհարաբերու-
թյուն նրա հետ։ Մերձենալ գյուղացիական մաս-
սային, գյուղացիության շարքային աշխատավորի
հետ սկսել առաջ շարժվել դանդաղորեն, քան այդ
մենք կուղեյինք, բայց միայն այնպես, վոր շարժվի
մեզ հետ ամբողջ մասսան։ Այն ժամանակ շարժման
թափու այնքան կուժեղանա, վորի մասին այժմ մենք
յերազել չենք կարող»։ (Լենին)։

A 38/29
Խորհրդային յերկրի շահերը, գյուղացիների
իսկ շահերը պահանջում են, վորապեսզի բանվորա-
գյուղացիության միության մեջ բանվոր դասա-
կարգը լինի ղեկավարող ուժը։

«Բանվոր դասակարգը ներկայացնում ե իրանից
ավելի գիտակից ուժ, ավելի լավ կազմակերպված
և ավելի ընդունակ իր հետեւից տանելու ազգաբնա-
կության աշխատավորության լայն խավերը։ Նո-
րից ու նորից պիտի ընդգծել, վոր գյուղացու
«մեղքը» չե նրա անգիտակից մինչըլայլ նըս դըժ-

բաղդությունն ե այդ: Բայց սլարդ ե միանգամայն, վոր պըուիտարիատի զեկավարումը ողուտ ե վոչ միայն բանվոր դասակարգին այլ և գյուղացիությանը: Առանց այդ զեկավարության տանուլ կրտային վոչ միայն բանվորներն այլ և գյուղացիության լայն խավերը»: (Բուխարին—«Դեպի սոցիալիզմ և բանվորա-դյուղացիական դաշինք»):

Լենինը սովորեցրեց, վոր ամեն կերպ պիտի ողնել գյուղացիությանը՝ բարձրացնելու իր կուլտուրական մակարդակը: Այդ պատճառով ել շատ կարևոր ե գեղջկուհուն, առաջին հերթին բատրակուհուն բարձրացնելու իր կուլտուրական և քաղաքական պատրաստականության մակարդակը, սովորել միանգամայն կառավարելու իր յերկիրը: Այդ հանգամանքում նրան առաջին հերթին ոգնության կղապատգամավորական ժողովը:

Պատգամավորուհին պիտի ոգնի գյուղխորհուրդին նրա բոլոր աշխատանքների ընթացքում: Գյուղխորհուրդի առաջ դրված են շատ խնդիրներ, վոր առանց ակտիվ գեղջկուհու ոգնության, դժվար կը լինի իրադործել: «Մեզ պետք չե այժմ ինքնավստահ կերպով կանգ առնել խորհրդային յերկրների դրական աշխատանքների վրա, ասելով, վոր մեզ մոտ ամեն ինչ լավ ե և ամեն ինչ բավարար: Ընդհակառակը, այժմ մենք պետք ե խոսենք խորհրդային շինարարության մեջ նկատվող թերությունների

մասին, մանավանդ գյուղում, վորովհետեւ ինչ վոր լավ է, համեմատած թերությունների հետ շատ քիչ է: Այդ թերությունները ի հարկե զվարապես բղխում են նրանից, վոր մենք դեռ նոր ենք կառուցում մեր խորհրդային ապարատը, այն ել տղիտության և լիազես տնտեսական քայլայման պայմաններում»: (Կագանովիչ):

«Գյուղացիներից ստեղծել կառավարության շուրջը ակտիվ անկուսակցականների լայն խավ, այդ՝ հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ գյուղի գործնական կարիքների շուրջը մասսայական աշխատանք տարվի, գյուղի խորհրդային շինարարության ընթացքում, գրավելով գյուղացիության՝ շրջանի, գավառի, նահանդի ղեկավարման դորժի մեջ»:

Կենդանացնելու վոտքի կանգնեցնել խորհուրդները, գրավել դեպի խորհուրդը գյուղացիության լավագույն տարրերին, այդ ե այն ճանապարհը, վորով հնարավոր ե դուրս քաշել գյուղացիության անկուսակցական ակտիվինն»: (Մտալին, Կենտկոմի խորհրդակցությանը տված ղեկուցումից):

Գյուղխորհուրդները և շրջդորձկոմները կանոնավոր չեն հավաքվում, անբավարար չափով ե կիրառվում, աշխատավոր մասսաներին խորհրդային շինարարական աշխատանքներին քաշելու դորժը:

Խորհրդային ստորին մարմիններն դեռ ամեն սեղ չեն հանդիսանում գյուղի հասարակական կյանքի կազմակերպողը։ Մեծ մասամբ տանելով վարչական և գործադիր աշխատանքներ, բավարար չափով չեն զբաղվում տնտեսական աշխատանքներով, վոր կծառայե աղդաբնակության կարիքներին և պահանջներին։

... Պետք ե ստորին ապարատները զգան։ Վոր պատասխանատու են իրանք ընդհանուրի առաջ, վոր նրանք պարտավոր են ծառայելու իրանց ընտրողների կարիքներին ուշադիր, զգայուն և առանց ձևականությունների։ (Կազանովիչ)։

Համամիութենական ավագը—նախագան՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեյի՝ հանդիսանում ե Միխայիլ Իվանովիչ Կալինինը։

Նրա կենսագրությունը։ Միխայիլ Իվանովիչ Կալինինը ծնվել է 1875 թվի նոյեմբերի 7-ին Տվեր-ըսկի նահանգի, Վերխնայա Տրոիցա գյուղում, գյուղական ընտանիքում։ Մանկությունից ուսման ձղուում եր ցույց տալիս և ինքնուս կերպով սովորել ե գրել-կարդալ։ Հետո տեղավորվել ե քաղաքային տարրական դպրոց, վորտեղ վերջացնում ե մեծ հաջողությամբ։ Դարոցը վերջացնելուց հետո Կալինինը շուտով տեղափոխվում է Լենինգրադ և մրոնում փամփուշտի գործանանն աշխատելու, վորպես

աշակերտ և մնում այնտեղ յերկու տարի. 16 տարեկան հասակում նա մտնում է, վորպես տոկար Պուտիլովսկի դավոդը, վորտեղ ծանոթանում է հեղափոխական գրականության և գաղտնի աշխատողների հետ։ 1898 թվին ընկ. Կալինինը մտնում է Սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ և մեկ տարուց հետո ձերբակալվում։ Բանտում նստում է 10 ամիս։ Ձերբակալվելուց հետո ընկ. Կալինինը տանում է հեղափոխական աշխատանք Թիֆլիսի բանվորների մեջ։ Շուտով նրան, վորպես աքսորյալ տեղափոխում են Ռեվել քաղաքը, վորտեղից 1903 թվի հունվարի 9-ին նորից ձերբակալում են և տանում Լենինգրադ, վորտեղ նա մնում է 6 ամիս։ Բանտում յենթարկվում անխիղճ տանջանքների և մի ամսից հետո նորից աքսորվում է Ռեվել քաղաքը։

1904 թվին նրան աքսորում են Սիրիր, բայց վերադարձնում են ճանապարհից, վորովհետև սկսել են արդեն յապոնական սլատերազմը։ Նրան ուղարկում են Ոլոնեցիի նահանգը, վորտեղ և մնում է մինչև 1905 թիվը յերբ և ազատվում է։

1906—1908 թվերին մետաղագործների միության մեջ պիտերյան կոմիտեյի անդամ է և տանում հեղափոխական աշխատանք պիտերյան դավոդներում։ Բոլոր այդ աշխատանքներին զուգադիմում եր ձերբակալությունները։ Ցարական կառավա-

բության հետապնդման պատճառով աշխատելը դառնում է անհնարին և ընկ. Կալինինը գնում է դյուղ: Մի քանի ժամանակ նա պարապում է դյուղատնտեսությամբ: 1909 թվին գնում է Մոսկվա և 1910 թվին նորից ձերբակալվում և Մոսկվայից հեռացվում: 1911 թվին գնում է Լենինգրադ և մընում է մինչև 1915 թիվը: 1916 թվին նրան նորից ձերբակալում են և ազատում է միայն փետրվարյան հեղափոխությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությանն ընկ. Կալինինը գործոն մասնակցություն և ունենում: 1919 նրան ընտրում են Ռ.կ.կ.կ.կ. անդամ և այդ թվից ել ընկ. Կալինինը ստանձնում է համառուսական կենտ. Գործ-կոմի նախագահի պաշտոնը:

1922 թվին ստանձնեց Հ. կ. Գ.-ի նախագահի պաշտոնը և մինչև հիմա ել մնում է նույն պաշտոնում:

Ընկ. Կալինինը իր կապերը բոլորին չի կըսրում դյուղացիությունից: Հանձինս ընկ. Կալինինի կարծես թե մարմնանում է բանվորա-դյուղացիական դաշինքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՆ Ե ԸՆԿ. ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՑԱՆԻ

Տալիս ենք նրա համառոտ կենսագրությունը. Ծնվել է 1886-ին Բալախանի, Բագվա մոտ ըն-

կած նավթարդյունաբերական Արվարձանում։ Ուսանել է Բագվում—մինչև 1905 թիվը, և ուսանողական տարիներից մասնակցել է հեղափոխական շարժումներին։ Այդ ժամանակ ել խմբագրել է ոռուսերեն անլեզարտ սոցիալ-դեմոկրատական որդան «Ահազանգ»-ը (Ա ճ ա Տ) և հրատարակել է յերկու անլեզարտ բրոցյուր։ Լենինգրադի համալսարանի իրավաբանական մասնաճյուղը մտնելուց հետո ընդհատակյա պրոպագանդիստական աշխատանք է վարել թե ուսանողության և թե բանվորության շարքերում։ 1907-ից ընդհատակյա աշխատանք է վարել նավթարդյունաբերական շրջանում։ Հայ և ոռուսանվորների շրջանում։ Համալսարանը ավարտելուց հետո ստացել է յերդվյալ հավատարմատարի (փաստաբան) ոգնականի պաշտոն և միաժամանակ պրոպագանդիստական և գրական գործունեյության հետ զրադվել է իրավաբանական աշխատանքով։ Կարդացել է բանվորական շրջաններում դասախոսություններ քաղաքատնտեսության, պետական ապահովագրության, բանվորական որենսդրության մասին։ Խմբագրել են ընկ. ՍՃ. Շահումյանի հետ միասին «Նոր Խոսք» մարքսիստական հանդեսը, և աշխատակցել են «Բանական Ռաбоչի » (Բագվա բանվոր) յերկարաժամկերթին։ 1913-ին ձերբակալվել են վորագես Բագվա մեծամասնական կազմակերպության անդամ և բնտարկությունից հետո

աքսորվել հինգ տարով կովկասի սահմաններից : Հետագա շրջանում վարել ե գրական-մարքսիստական աշխատանք կուսակցական որդաններում : Աշխատակցել ե «Պրավդա»-ին և «Պայքար»-ին : 1917-ին ընտրվել ե Բագվա բանվորական կոռպերացիայի կողմից դեմոկրատական խորհրդաժողովի (մեծամասնական Փրակցիայի) անդամ : Միևնույն տարին հրավիրվել ե Բագու, ուր աշխատատել ե բանվորական բայոններում : Ընտրվել ե ոռւս կոմկուսակց . Բագվա կոմիտեյի անդամ և կուսակցական որդանների խմբագրական կովկացիայի անդամ : Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո ընտրվել ե Բագվա Բ. Զ. և Գ. Խորհրդի, Գործադիր կոմիտեյի անդամ և Բագվա բանվ . և կարմ . բան . խորհրդի պաշտոնական որդանի խմբագրի : Իսկ հետագայում Ժող. կոմ . Խորհրդի կազմակերպությունից հետո ընտրվել ե կառավարության անդամ, վորագես Արդարադ . կոմիսար : Բագվա խորհրդի անկումից հետո Խորհրդ . Ռուսաստանում վարել ե քաղաքական-հասարակական դրական աշխատանք Մոսկվա, Լենինգրադ և ուրիշ քաղաքներում : Խմբագրել ե «կոմունիստ», «կարմիր Դրոշակ», «Խորհրդային կովկաս» որդանները : Հայաստանի խորհրդայնացումից հետո ընտրվել ե Հ կոմ . կուս . կենտրոնական կոմիտեյի անդամ և Արդարադատ Ժող. կոմիսար : 1922-ին կառավարության վորոշմամբ ուղարկ-

վել ե արտասահման Պոլիս և Ամերիկա։ Վերադառնալուց հետո ընտրվել ե Հայկենտգործկոմի Անդրկենտգործկոմի, Համամիութենական կ. Գործկոմի անդամ։ 1924-ին ընտրվել ե Հայկենտգործկոմի նախագահ։ Բացի դրական առանձին հոդվածներից և ուսումնասիրություններից («Известия Бак. Совета», «Нар. Испол.», «Рабочий», «Правда», «Нар. Народ. Рабочий» և այլն) հրատարակել ե առանձին՝ «Հայաստանի ապագան» (1919), «Կովկասյան պրոլետարիատի պատմություններ» I. II. (1919), «Հին և նոր արվեստը», «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստան», «Ստեփան Շահումյան», «Դաշնակցությունը—իստերի դեմ» և «Հայ աղքայնականների ուղին»։

ՆՅՈՒԹԵՐ Յ-ՐԴ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Գյուղխորհուրդը տեղական կարիքների համար միջոցներ ե ստանում շրջանային դրամարկղից (տեղային բյուդջե)։ Տրջդործկոմին տրված ե բյուդջետային իրավունք, վորը կարող է ինքնուրույն կերպով մի տարով վորոշել ծախսերի և յեկամուտների աճումը, շրջանը վերածում է ինքնուրույն տնտեսական միավորի, նա ապագայում ստանում է լայն հնարավորություններ, մեծ միջոցներ, ժողովրդական տնտեսության զարգացման ու աճեցման հետ միասին։

Երջանն այդպիսով ստանում ե վոչ միայն իրավունք և պարտականություն, այլ և ստանում ե տնտեսական հնարավորություններ իրագործելու իր իրավունքները և պարտականությունները: (Կազանովիչ, Գյուղխորհուրդների աշխ. բարելառ վումը):

«Գյուղխորհուրդը ծախսում է միջոցներ գյուղի գանազան կարիքների համար: Գյուղացին և գեղջկուհին ևս ունեն կարիքներ, վորոնք իրանց ուժերով և առանձին չեն կարողանում բավարարել: Գյուղխորհուրդը պետք է վճարի չենքերի վարձը, աշխատակիցների աշխատավարձ, լուսավորության և վառելիքի, ընթացիկ նորոգումներ գպրոցական և այլ չենքերի, բժշկական կայանների, բուժարանների, չենքեր բժշկական կայանների, բուժարանների, անասնաբուժական կետերի, արհեստանոցների պահպանման ծախս, գյուղատնտեսական գործիքների նորոգման համար և այլն: Ի՞նչպիսի յեկամուտներ ունեն տեղերը այդ բոլորի համար:

Յեկամուտների աղբյուրներից մեկը հանդիսանում ե չըջդործկոմի իրավասության տակ գտնված ձեռնարկությունները (ջրաղացներ, ձիթահաններ, աղյուսի գործարաններ, արհեստանոցներ, հողերի յեկամուտներ և այլն), վորոնք գտնվում են խորհրդի իրավասության տակ:

Բացի դրանից կան մի շարք յեկամուտային հոգ-

վածներ, վորոնք տրվում են տեղական կարիքների համար համապետական հարկերից, միասնական գյուղատնտեսական հարկերից, դործարանների, դավողների, առևտրական-արդյունաբերական և այլ հարկերից: Բայց շրջանային բյուդյեյի հիմնական աղբյուրները պետք ե լինեն, մանավանդ ապագայում, ձեռնարկություններից, հաստատություններից, արդյունաբերությունից, հողի վարձակալության յեկամտներից և այլն, և վորքան շրջգործկոմը շատ յեկամուտ ստանա տնտեսական ձեռնարկություններից, այնքան ավելի քիչ կլինի մընացած հարկերը, վոր հավաքվում ե ազգաբնակությունից»: (Կագանովիչ):

Այժմս ամբողջ յերկրի առաջդրված ե վոչ արդյունաբերական ծախսերի կրճատման խնդիրը, Անել խնայող, տնտեսել խորհրդային յուրքանչյուր կոպեկը, վորը մեզ անհրաժեշտ ե, վորպեսզի բարձրացնենք գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը:

Տեղային բյուդյեն կազմելիս, պետք ե ցուցահաննել խիստ խնայողություն և տնտեսում յեղած միջոցների: Յեվ այստեղ պատղմավորուհին վորպես փորձված տնտեսուհի, կարող ե շատ բանով ոգնել:

Հնկ. Լենինը դրել ե այն մասին, վոր մենք «Տնտեսության մեծաղույն խնայողության գնով

մեր յերկըում կարող ենք հասնել նրան, վորպեսզի բոլոր խնայած միջոցները դործադրենք մեր խոշոր մեքենայական արդյունաբերության վրա, ելեքտրո-ֆիկացիայի զարգացման, ջրատորֆի (ողտագործելով ջրային և վառելանյութի ուժերը) Վոլվոստրոյի կառուցումը վերջացնելու համար»:

Խորհրդային իշխանության հարկային քաղաքականությունը չափազանց տարբերվում է ցարական կառավարության քաղաքականությունից: Խորհրդային իշխանությունն աշխատում է հարկերի ծանրությունը դնել ունեորների ուսերին (Գյուղացության 20%-ը՝ չքավոր տարրը, բոլորովին ազատվում է գյուղատնտեսական հարկից, մնացածները վճարում են իրանց տնտեսության համեմատ): Ցարական կառավարությունը ձգտում էր աղատել մեծ հարկերից վաճառականներին, գործարանատերերին, իսկ ամբողջ հարկերի ծանրությունը դնում էր գյուղացու և բանվորի վրա:

«Ցարական Ֆինանսների մինիստր, դրաֆ Կոկովցեվը, նախակին մինիստրների խորհրդի նախագան, հրատարակել ե արտասահմանում մի դիրք, վորտեղ խոստովանում ե, վոր հարկադրումը ամեն մի մարդու հասնում էր 11 ոռուբլուց ավելի, մի քանի տվյալներով հասնում էր 12 ռուբլի 29 կոպ. յուրաքանչյուր մարդու և կազմում էր մի վեցերորդ մասը գյուղացու յեկամտի:

Մեր յերկրում այժմս ազգաբնակության մի հոգու վրա ընկնում է և ոռւբլուց պակաս, առաջիկայում, հարկային չափը յուրաքանչյուր տարի, ավելի լավ բաժանվելու յե: Զքավորությունն ազատվում ե, իսկ կուլակները ավելի շատ են հարկադրվում:

Ենթե վերցնենք 1921/22 թիվը հարկը կազմում եր 6 ր. 11 կ., 1922/23 թ.-3 րուբ. 98 կոպ., 1924/25 թ.-3 րուբ. 06 կոպ.:

Դյուղացիության հիմնական հարկը միասնական գյուղատնտեսական հարկն ե: «Միասնական գյուղատնտեսական հարկը պետք ե գյուղացու բոլոր տնտեսություններից յեկած յեկամտից վերցնել, վոչ միայն հողագործությունից, ինչպես տեղի յե ունենում այժմս»: (Համամիութենական խորհուրդների 2-րդ համագումար):

Համամիութենական խորհուրդների 3-րդ համագումարը, գոյություն ունեցող գյուղատնտեսական հարկի վերացման կողմ արտայատվեց «Ամենամեծ զգուշությամբ պարզել գյուղացու ծուխի հարկադրման կարողությունը և ըստ այնմ վորոշել հարկի չափը»:

Հ. Ս. Խ. Մ. 2-րդ գումարման կենտղործկոմի 3-րդ նստաշրջանը հետևյալ փոփոխությունը մըտցրեց.

«Առաջին՝ հարկադրման ժամանակ չպետք ե ինկատի ունենալ միայն ծուխերի հողագործության

աշխատանքը, այլ և բոլոր տեսակի աշխատանքի և
յեկամտի աղբյուրները։ Այնուհետև, վորսանակ
97 տարբեր չափերով հարկադրումը, կիրառվում է
միտախտակ, վորի հիման վրա գյուղական ծուխը
հարկադրման և յենթարկվում վոչ միայն նրա հողի
գեսյատինաչափը, այլ նրանից ստացած ռուբլուց,
տավարի դվիսի համեմատ, այդու գեսյատինից և
գյուղական ծուխի այլ յեկամտներից։ Բացի այդ
հարկի ծանրությունից ազատվելու են այն տնտե-
սությունները, վորոնք ավելի թույլ են (չքավո-
րությունը պիտի ազատվի հարկից) և պիտի ուժե-
ղացնել հարկի չափը ավելի մեծ տնտեսությունների
և ավելի ունեոր տնտեսությունների համար։

Գեղջկուհի-պատգամավորուհին հարկահավաք-
ման դեպքում պիտի ոգնի գյուղխորհուրդին, վոր-
պեսզի ավելի ճիշտ դանձվի և վոր ամենազլիսա-
վորն է այդ դեպքում չքավորության շահերը չ'առ-
ժեն։

Յուրաքանչյուր գյուղի, շրջանի, դավառի աղ-
գաբնակությունն ունի ընդհանուր կարիքներ, վո-
րոնք հոգացվում ե տեղական դրամարկղից, իսկ
պետությունն ամբողջապես ունի ընդհանուր պետա-
կան յեկամուտներ և ծախսեր։

Մեր պետությունը ծախսում է իր միջոցները
գյուղատնտեսության բարձրացման և արդյունա-
թերության վրա, փոստ-հեռագրի պահպանման

վրա, նոր հեռագրական գծեր անցկացնելու համար, փոխադրական միջոցների վրա, հին ճանապարհների և վաղոնների նորոգման վրա, նորերի կառուցման վրա, փոստի կանոնավորման վրա, նոր փոստային բաժանմունքներ և կառուցվում գյուղական ազգաբնակության համար, ելեքտրոֆիկացիայի վրա, գյուղատնտեսներ պահելու համար, ցուցադրական դաշտերի վրա, հողաշինարարության վրա, Կարմիր բանակի պահպանման վրա, ժողովրդի լուսավորության և առողջապահության վրա և այլն:

1925—26 թվի համար հաստատված և հետևյալ հիմնական ծախսերը.

Գյուղատնտեսության համար	159.001.000	րուբ.
Արդյունաբերության	160.500.000	»
Ելեքտրոֆիկացիայի	69.100.000	»
Կոպերացիայի	25.035.000	»
Կոմմունալ վարկի	80.000.000	»
Շինարարության	5.957.000	»
Փոստ-հեռագրական	140.700.000	»
Փոխադրության	1.329.000.000	»
Կարմիր բանակի	635.480.000	»
Առողջապահության և Լուսավոր.	97.493.260	»

(Կենտ-կոմի և Խ. Ս. Հ.-ի Ժողկոմխորհի 1926 թ. վորոշումը) 1925—26 տ. Պետության ընդհանուր ծախսերը 2.039.284. 776 րուբ. և կազմում:

Հայոսստանի 1925—26 թվի ծախսերը կազմում
են 12,610,8 լ., իսկ 1926—27 թվի ծախսերը—
19,764,8 լ.։

Մեր զինվորական ծախսերը կապիտալիստական
պետությունների զինվորական ծախսերից քիչ ե։

Վո՞րտեղից ե ստանում պետությունը միջոցներ,
վորակեսզի ծածկի բոլոր ծախսերը։

1925—26 տ. պետությունն ուղղակի հարկերից
ստանալու եր 583 մլնն ոռւբլի։ Սրա մեջ մտնում ե
գյուղատնտեսական, արհեստավորական, յեկա-
մբտային, ժառանգությունից հարկ և այլն։ 1925—
26 տ. քաղաքի վճարած հարկերն անհամեմատ շատ
ե գյուղի վճարածից։ Գյուղատնտեսական հարկը
այս տարրում կազմում ե միայն մեկ տասնվեցերորդը
պետական բոլոր յեկամուտների մեջ։ Պետությունը
յեկամուտ ե ստանում և բաժից (ակցիզից)։ Բաժից
ստացված յեկամուտը ցարական որերում կազմում
եր յեկամուտների $\frac{3}{4}$ մասը, իսկ մեզ մոտ կազմում
ե ամբողջ յեկամտի միայն $\frac{1}{3}$ մասը։ Հիմնական յե-
կամտի գումարները, պետությունը ստանում ե
արդյունաբերությունից, առևտրից և վոչ հարկա-
յին յեկամուտներից։ Պետության կողմից 1925—26
տարվա ամբողջ յեկամուտը հաստատված է
4.039.284.776 ռուբլի գումար։

Խորհրդային իշխանությունը ստանալով պե-

տական յեկամուսոները ծախսվում և բացառապես
աշխատավորության ոգտին:

Յարական կառավարությունը, ազգաբնակու-
թյունից հավաքելով հարկերը ծախսում եր Լուսա-
վորության և Առողջապահության վրա նրանից մի-
այն գրոշները: Միջոցների մեծագույն մասը ցարա-
կան կառավարությունը ծախսում եր իր պալատի
վրա, շքախմբի, հանդեսների, ճոխ ճաշկերութնե-
րի, զորքի, ժանդարմերիայի վրա: Զորքի վրա ցա-
րական կառավարությունը ծախսում եր 850 միլ-
լուրլի: Մրբազնագույն սինոդին տրվում եր յուրա-
քանչյուր տարի ցարական դրամարկղից 2,688,765
րուրլի, հոգեոր դասի վորբերի պաշտպանության
համար ամեն տարի տրվում եր 4·200·330 րուրլի:

ՆՅՈՒԹԵՐ 4-ՐԴ ԶԲՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միությունը բռնում է Հսկայական յերկ-
րամաս (տերիտորիա): Այդ տարածության վրա ապ-
րում են 130 միլիոն ազգաբնակություն: 1897 թ.
ցարական Ռուսաստանի ընդհանուր մարդահամա-
րին, յուրաքանչյուր 100 մարդուն ընկնում եր 43
հոգի ուռւ, իսկ մնացած 57 հոգին պատկանում եյին
զանազան ազգություններին (17 Ռւկայնացի, 6 լեհ,
մոռավարապես 5 բելոռուս, 4 հրյա, 3 թաթար,
3 կիրգիզ—կազակ):

Վորապեսզի հեշտ կերպով կարողանա ճորտության մեջ պահել բազմաթիվ ժողովուրդներին, ցարական կառավարությունը, դիտմամբ կասեցնում եր նրանց զարգացումը և պահում եր նրանց խավարի մեջ։ Բոլոր ազգությունները, բացառությամբ վելիկուուսներից հաշվվում եյին «ուսարազգայաններ»... Նույնիսկ տիրող կրոնը համարվում եր ուղղափառ դավանանքը, իսկ մնացածները, կամ հետապնդվում եյին, կամ մի կերպ տարվում։ Մեծ մասամբ, չեր թույլատրում բաց անելու դպրոցներ մայրենի լեզվով։ Բոլոր դպրոցներում դասաւրվությունը տարվում եր ուսւերեն լեզվով, դպրոց մտնելու համար բոլոր ազգության յերեխանները պիտի գիտենային ուսւաց լեզուն։ Այդ ել միայն մատչելի եր հարուստի յերեխանների համար, իսկ մնացած ազգաբնակությունը մնում եր անգրագետ։ Այնպես վոր այժմս ել 100 հոգի թաթարից, կալմիկից, ուզբեկից 2-3 դրագետ ե»։ (Քաղգրագիտության դասադիրք գյուղական գեղջկուհիների համար)։

Ցարական կառավարությանը, կալվածատերերին և գործարանատերերին ձեռնտու եր տարբեր ազգությունների աշխատավորության մեջ տարածել ատելություն և բաժան-բաժան անել նրանց։ Նրանք հետապնդում եյին վորոշ նպատակ՝ «Այդ նպատակն ակնհայտնի յե՛ ժողովրդական

մասսաների ուշադրությունը, ինքնակալության դեռ՝
պայքարելուց հեռացնել, կատաղի կովի մղել աղ-
գարնակության քաղաքականապես հետամնացնե-
րին հեղափոխականների դեմ, մենույն ժամանակ
ներշնչել սարսափ ամեն մի «փողոցային» շարժման,
ստեղծելով սոցիալ-դեմոկրատների համար թե բա-
րոյական և թե տեխնիկական արդելանքներ խան-
գարելով նրանց դեմոնստրատիվ շարժումներ կազ-
մակերպելուն և վերջապես համախմբել բոլոր հե-
տադիմական ուժերին, վորոնց կարելի յե կովի
մղել հեղափոխական սլրուետարիատի դեմ, վորի
կողքին կանգնած եր և ինտելիգենցիան»: (Լենին,
յերկ. ժող. 4-րդ հատոր):

Բոլոր ազգությունների աշխատավորության-
ուուս գյուղացու, լեհի, ուկրայնացու, թաթարի և
և այլն բոլորի շահերը մեկ ե:

Նրանք բոլորը հավասար չափով և միատեսակ
են տանջիկել կալվածատերերի կողմից, լինի դա-
ռուս, ուկրայնացի կամ լեհ և այլն: Քաղաքացիա-
կան կովի ընթացքում կարմիր բանակի մեջ, կովում
եյին և՛ ռուսը, և՛ ուկրայնացին, և՛ լեհը, և՛ լատի-
շը, և՛ հրյան: Նրանք բոլորը կովում եյին կալվա-
ծատերերի և գործարանատերերի դեմ, սլաշտպա-
նելով իրանց սիրելի Խորհրդային իշխանությունը:

«Կալվածատերերը և դրամատերերը ինչ գնով ել
վոր լինի ցանկանում են անջատել տարբեր աղգու-

թյունների բանվորներին, իսկ նրանք (բուրժուազիան) աշխարհի ամենաուժեղները միանում են իրար, ինչպես միլիոնավոր գործերի փայտերեր, և' ուղղափառներ, և' հրյաներ, և' լեհեր, և' ոռուներ, և' ուկրայնացիներ մի խոսքով նրանք ովքեր ունեն կապիտալ, համերաշխ կերպով շահագործում են ամբողջ ազգերին»: (Լենին)

«Բանվոր դասակարգի շահերը պահանջում են հակառակը՝ առանց բացառության բոլոր ազգությունների իրավունքների հավասարեցում և ազգամիջյան բոլոր պատնեշների վերացում: Հին, ճընշված ազգությունների աշխարհին, ազգային յերկողառակտումներին կամ ազգային խորություններին բանվորները հակադրում են նոր աշխարհ—բոլոր ազգությունների աշխատավորությունը մի միություն են կազմում, վորտեղ չկա վոչ մի արտօնալ վիճակ և վոչ մի մարդ չի ճնշում իր նման մարդուն»: (Լենին):

«Կապիտալիստների և կալվածատերերի կառավարությունը վոչնչացնելով, վորոնք հանդիսանում եյին ազգային ատելության հիմնական տարածողները և իշխանությունը հանձնելով պրոլետարիատին, Հոկտեմբերյան հեղափոխությունը մի հարվածով փշրեց ազգերի ճնշման դարավոր շղթաները, վերացրեց հին վերաբերմունքը ժողովրդների միջև, վերացնելով ազգային ատելու-

թյունը ամենուրեք, հող պատրաստեց ազգերի համերաշխ աշխատանքի համար և գրավեց վոչ միայն Ռուսաստանի այլ և Յեվրոպայի և Ասիայի պրոլետարիատի հավատը:

Ազգությունների հանրապետությունների միացումը՝ Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ հանդիսանում և դինվորատնտեսական և քաղաքական միություն՝ Խորհրդային իշխանության»։ (12-րդ համագումարի բանաձեռքից)։

«Վերջապես, Խորհրդային իշխանության կառուցվածքը, ինքը, իր դասակարգային բնույթով՝ ինտերնացիոնալիտական և, վոր խորհրդային հանրապետությունների աշխատավոր մասսային մղում և միանալու և սոցիալիստական մի ընտանիք կազմելու։

Բոլոր այդ հանդամանքները հրաժայողաբար պահանջում են խորհրդային հանրապետությունների միանալուն՝ մի միութենական պետության մեջ, վորն ընդունակ կդառնա ապահովելու արտաքին վտանգից և ներքին տնտեսական հաջողության և ժողովուրդների լիակատար աղդային ազատության զարգացման յերաշխիք կլինի։

Խորհրդային հանրապետությունների ժողովուրդների կամքով հավաքվել եյին մոտիկ անցյալում՝ իրանց խորհուրդների համագումարում, վորտեղ և միաձայն վորոշում կայացրել կազմելու

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-ների Միություն, վորը հանդիսանում ե յերաշխիք այն բանին, վոր դա ազգությունների կամավոր իրավահավասար միացումն ե, վոր յուրաքանչյուր հանրապետություն իրավունք ունի ազատ կերպով դուրս գալու միությունից, վոր Միության մեջ մտնել կարող են բոլոր սոցիալիստական խորհրդային հանրապետությունները, ինչպես արդեն գոյություն ունեցողները այնպես և ապագայում կազմակերպվողները, վոր նոր միութենական պետությունը հանդիսանում ե 1917 հոկտեմբերի նվաճումների անմիջական հետեանքը, վորը հիմք ե կազմում խաղաղ համակեցության և ազգությունների համագործակցության, վոր նա ներկայանում ե միակ հակառակորդը համաշխարհային կապիտալիզմի և նոր վճռական քայլերով ընթանում ե առաջ այն ճանապարհով, վոր միացնի բոլոր յերկրների աշխատավորությունն ու կազմի Համաշխարհային Սոցալիստական Խորհրդային Հանրապետություն»: (Հ. Ա. Խ. Մ-ի կազմակերպման դեկլարացիան):

Կուսակցության 12-րդ համագումարը մատնանըշեց, վոր «փաստորեն բոլոր ազգությունների իրավունքի հավասարությունը դեռ բավական չե, պետք ե ոգնել այն աշխատավոր մասսային, վորը հետ ե մնացել կենտրոնական Ռուսաստանից՝ հասնելու նրան: Յեվ կուսակցությունը և խորհրդային իշխա-

նությունը մի շարք միջոցներ են ձեռնարկում վերականգնեցնելու և զարգացնելու փոքր ազգությունների տնտեսությունները (Կոոպերացիայի զարգացում, արդյունաբերության ուժեղացում, տնայնագործներին ոգնություն և խոչոր արդյունաբերության աստիճանական զարգացում»)։ (12-րդ համագումարի բանաձեռքը)։

Ճնշման քաղաքականությունն առանձին ծանրությամբ ընկնում եր ճնշված ազգությունների կանանց վրա։ Արևյելքում կնոջը չեյին ճանաչում վորպես մարդու։ Նրան վաճառում և գնում եյին դրամով։ Ամուսնացնում եյին, ավելի ճիշտ ծախում։ Բոլորովին յերեխաններին, ութ տարեկան աղջկան ամուսնացնում եյին զառամյալ ծերունիների հետ։ Ամենածանր աշխատանքն ընկնում եր կնոջ ուսերի վրա։ Նրան չեյին սովորեցնում դրագիտություն և նա գուրկ եր բոլոր իրավունքներից։ Խորհրդային իշխանությունը արևելյան աշխատավորուհուն տրդամարդուն հավասար իրավունքներ տվեց։

1924 թվին Խորհրդային Արևյելքի խորհուրդների մեջ կնոջ թիվն եր 3704, 1925 թվին արդեն հասել է 17,596-ի։

Ազգային հանրապետություններում և չըջաններում պատգամավորուհիների թիվը հասնում եր 1923/24 թ. 25,028, 1924-25 թ. 58,410, իսկ 1925-26 թվին միայն 8 ազգային հանրապետու-

ՊԱՏԳ. ԳՈՐ. ՄԱՍՆԱԿՅՈՒՆ
ՊԱՏԳԱՄԻՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ
ԹԻՎԸ 1925 և 1926 թ.

6277

2962

1924-25թ.

1925-26թ.

ԿԱՆԱԿԱ ԹԻՎԸ
ԳՅՈՒՂՆՈՐՀՐԴԱՆԵՐՈՒՄ
1925 և 1926 թ.

910
5,51%

1924-25թ.

1166
8,20%

1925-26թ.

թյուններ ունեյին 32·837 պատգամավորուհի:

Արևելյան կնոջ թիվը 1924 թվի Հունվարի 1-ին աղքային հանրապետություններում և շրջաններում հասնում եր 6662, իսկ 1925 թվին հասել եր 11470-ի, 1926 թվի Հունվարի 1-ին 18 հանրապետություններում 19785:

Աղջիկների թիվը Կոմեյերիտմիության մեջ ընդհանուր թվի 10,6% եր կազմում 1925 թվի հունվարի 1-ին, իսկ 1926 թվի Հունվարի 1-ին արդեն 13,9% (ընդհանուր թվի):

Արևելքում կինը դեռ մասսայի մեջ լինում է միայն ծածկված յերեսով, և չի լինում այն տեղերում վորտեղ տղմարդն ել լինում, այդ իսկ պատճառով ել կազմակերպված են կանանց հատուկ ակումբներ: Այդ ակումբներին կից կա դպրոց անգրագիտությունը վերացնելու նպատակով, արհեստանոցներ, վորտեղ, արևելուհին սովորում և զանազան արհեստներ, յերեխանների կոնսուլտացիա, պիոներական խմբակներ աղջիկների համար: Այդպիսի ակումբներ 1922 թվին կար 22, 1923 թվին—27, 1924 թ. 51, 1925 թ.—64: Շատ տեղերում կա ակումբներում աշխատավորուհու անկյուններ: Այդպիսի անկյունների թիվը 1924 թվին 116 եր, 1925 թ.—281:

ՆՅՈՒԻԹԵՐ 5-ՐԴ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ գյուղատնտեսության մեջ մեծ դեր է խաղում:

1922 թվին գյուղատնտեսական արտադրողականությունն ուսումնասիրելիս, որինակ, Լենինգրադի նահանգի գեղջկուհու աշխատանքը գյուղատընտեսության մեջ կազմում եր հետեւյալ տոկոսները:

«Հողագործության մեջ կնոջ մասնակցությունը 34,5, տղամարդկանց—55,0, պատանիների—10,5: Խոտահարքի մեջ կանայք մասնակցում են 40,0, տղամարդիկ—53,5, պատանիներ 6,5, անասնապահության մեջ կանայք 67,5, տղամարդիկ 31,0, պատանիներ 1,5, . անտառային տնտեսության մեջ կանայք 33,0, տղամարդիկ—67,0. տնային տնտեսության մեջ կանայք—96,5 տղամարդիկ—3,5. գյուղատնտեսական մեթոդների պատրաստմա գործում կանայք մասնակցում են—100,0, տղամարդիկ—0:

Այս թվերն արդեն ապացույց են: Սրանից յերեսում ե, վոր կինը—գեղջկուհին մասնակից ե բոլոր գյուղատնտեսական աշխատանքներին: Իսկ տնտեսության այնպիսի ճյուղը ինչպիսին ե անասնապահությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը և տնային տնտեսությունը. բոլոր այդ ճյուղերում կնոջ վրա ընկնում ե աշխատանքի ամենածանր մասը: Այգեգործության և բանջարաբու-

ծության մեջ կնոջ աշխատանքը կազմում է՝ 75%-ը. թունաբուծության և կաթնատնտեսության մեջ՝ 95%-ը»։ (Լեյնեվ-Փինկովսկի—գեղջկուհին գյուղատնտեսության մեջ)։ Գեղջկուհին առավել ևս մեծ մասնակցություն ունի բոլոր արհեստների մեջ։

Համեմատելով գեղջկուհու խաղացած դերը տնտեսության մեջ, նրա հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելուն կը տեսնենք, վոր բոլորովին հետ ե մնում կինը այդ առարկեղից։ Գյուղի հասարակական բոլոր կազմակերպություններին քիչ մասնակցություն ե ցույց տալիս կինը։ Մինչև այժմ միայն հարյուրով, հազարով գեղջկուհիներ մասնակցում են խորհուրդներին, կոռպերացիային և այլն։ Պատգամավորուհին պետք ե գյուղի ամենաակտիվը լինի, նա պետք ե քաշի գյուղի գեղջկուհիների մասսան դեպի հասարակական աշխատանքը. գեղջկուհուն ամեն կերպ ոգնության կդա կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը։

1925 թվի Միջազգային կանանց որվա առթիվ հրատարակված ե հետեւյալ վորոշումը՝


«Գեղջկուհու խական դերը գյուղատնտեսության մեջ, նրա դերը տնայնագործության, գեղջկուհու կազմած %-ը բարակների մեջ. այս բոլորը թելադրում են հրամայողական անհրաժեշտություն՝ ա) ոգնել, գյուղացիական այն տնտեսություննե-

**ՄԱՍԻՆՎԱՇՊՐԵՐՅԱ ԶՄՐ-
ԳՎԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**


1923 - 27 թ.

1) ԶԻՒԾԸ


1,000 ԳԼՈՒԽԱՅԱԿ



**2) ԱՄԱՐ ՅԵԶԱԳՈՒՐՑԱԾՈՅ
ԿԵՆԴՐԱԿԱՆԻ**



**3) ԻՆԾՈՐ ՅԵԶԱԳՈՒՐՑԱԾՈՅ
ԿԵՆԴՐԱԿԱՆԻ**



րին, վորտեղ զեկավարում և գեղջկուհին, կանգնելով տնտեսության գլուխը, տալով գյուղատնտեսական հարկ, հողաշինարարական գործը կարգավորել, մատակարարել սերմացու և անտառային նյութեր, կենդանիներ, աշխատանքին ողնելու և գյուղատնտեսական գործիքներ և այլն. բ) կաղմակերպել յերեխաների համար հիմնարկներ վաչմիայն ամառային ուժեղ աշխատանքի ժամանակ, այլ և ամբողջ տարվա ընթացքում. գ) միջոցներ ձեռնարկել վերացնելու բյուրոկրատիզմը դատական և վարչական մարմինների կողմից. դ) քաշել գեղջկուհուն գյուղատնտեսական – կուլտուրական աշխատանքի, կոռապերատիվ կազմակերպության մեջ, փոխադարձ ողնության կոմիտեների, դատական ասպարիզում, գյուղխորհուրդներում և չըրջգործկոմներում. յե) լուրջ միջոցներ ձեռք առնել անդրագիտությունը վերացնելու համար և աղջիկներին գրավել դեպի դպրոցները, դասընթացները և խմբականները»: (1925 թ. 8 մարտի համառուսական կենտղործկոմի վորոշումը):

«Գյուղական տնտեսությունն արդյունաբերության վերականգնեցման բազան և հետեւարարանվոր դասակարգի աճեցման գարկ տվողը, և վերջապես գյուղական շուկան և արդյունաբերության արտադրանքների լայն սպառողը: Գյուղական տնտեսությունը մի կողմից ել հանդիսանում

և մեր արդյունաբերության մշտական հում նյութեր մատակարարողը։ Այդ պատճառով ել հնարավոր ե գյուղական տնտեսության ոգնել, վարկ տալ վոչ միայն խորհրդային իշխանության շահերի տեսակետից, այլ և արդյունաբերության զարդացման արագ թափին նպաստելու համար։ (13-րդ կուսկոնֆերանսի բանաձևերից)։

Շնորհիվ կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության տարած ուղիղ քաղաքականությանը, գյուղական տնտեսությունը վերջին տարիները բավականաչափ ամրացավ և բարձրացավ։ Ահա որինակ ինչպես ե աճում գյուղական տնտեսությունը, 1925 թվին ընդհանուր (վարավոյ) գյուղատնտեսական մթերքները հասնում եր 9 միլիարդ ռուբլուց ավելի, վոր կազմում ե 71%-ը նախապատերազմյանի (1913 թվին մթերքները հավասար եր 12 միլիարդ ռուբլու)։

1925—26 տարում յենթադրվում ե մթերքների արժեքը հասցնել մինչև 11 միլիարդ ռուբլու, վոր կազմում ե նախապատերազմյանի 88%-ը (հաշվելով նախապատերազմյան ռուբլիներով)։ Յեթև վերցնենք գյուղատնտեսության արտադրության առանձին ճյուղերը, այն ժամանակ աճումը արտահայտվում ե հետեւյալ կերպ՝ հացահատիկներ (ցորեն, դարի, հաճար և այլն) 1925 թվին կազմում եյին 307,2 միլիոն ռուբլի կամ նախապատե-

բազմյանի 33,7%-ը, իսկ 1925—26 թվին արդեն կազմում է 693,1 միլիոն ռուբլի կամ 76,4%-ը: Վուշի արտադրությունը 1925 թվին կազմում էր 52,1 միլիոն ռուբլի (69% նախապատերազմյան): 1925—26 թ. վուշի արտադրությունը կազմում է 67 միլիոն ռուբլի կամ 89,6%-ը: Զեթային սերմեր 1925 թվին 115 միլիոն ռուբլի, 1925—26 թվին—155,6 միլիոն ռուբլի, վոր կազմում է 135,3% նախապատերազմյանի: Բամբակի արտադրությունը 1925 թվին հավասար էր 82,2 միլիոն ռուբլու կամ 44% նախապատերազմյանի, 1925—26 թվին 165,4 միլոն ռուբլու կամ 85,5% նախապատերազմյանի:

Գյուղատնտեսությունը մեզ մոտ քիչ շահավետ ե՝ պատճառը այն ե, վոր նա տարվում է շատ հետամնաց ձևերով: Դիագրամայից պարզ յերեսում է թե վորքան անշահավետ ե մեր յերկրի գյուղատընտեսությունը համեմատելով ուրիշ յերկրների հետ՝

Քանի փութ հաց ե տալիս մի դեսյատին հողը դանազան յերկրներում.

Հոլանդիայում 170 փութ

Բելգիայում 156 փութ

Անգլիայում 147 փութ

Գերմանիայում 132 փութ

Ռուսաստանում 45 փութ

Հայաստանում աշնանացանից ստացվում ե 56
փութ, իսկ զարնանացանից 47 փութ:

(Թվերը կենտվիճակարի 26 թվերից)

«Ծուսաստանում պատերազմի առաջին տարին
ցորենի բերք ստացվում եր մի դեսյատինից 45
փութ: Նույն թվին Ամերիկայում ստացվել ե 75
փութ, Գերմանիայում 130 փութ, Անգլիայում
մոտ 150 փութ, իսկ Հոլլանդիայում 170 փութ:
Հոլլանդիայում մի գեսյատինի բերքը չորս անգամ
շատ ե Ծուսաստանից:

Ամբողջ Յեվրոպայում չկա մի յերկիր, վոր-
տեղ հացի բերքը ցածր լինի Ծուսաստանից:
Նույնիսկ կմախքացած Սերբիայում բերքը ավելի
բարձր ե: Դժբաղդ՝ քարուքանդ յեղած Տաճկաս-
տանը նույնպես հավաքում ե ավելի լավ բերք:
Հնդկաստանի աղքատ գյուղացիները, վորոնք չըր-
ջապատված են անգլիական կապիտալի ցանցերով,
նրանց աղքատությունը չի լսված և չի տեսնված վոր
մի յերկրում. բայց իրանց դժբաղդ մի կտոր հո-
ղից հավաքում են ցորենի ավելի լավ բերք, քան
Ծուսաստանը նույնչափ տարածություն հողից:
Միայն աֆրիկական յերկրներից մեկում—Թու-
նիսում մի դեսյատին հողից ցորեն հավաքում են
ավելի քիչ, քան Ծուսաստանում. այդ ել այն
պատճառով, վոր Թունիսի հողը անբերրի յէ: Թու-
նիսում վարսակի բերքը Ծուսաստանից բարձր ե:

Ծուսաստանի բերքը վոչ միայն ցածր ե, այլ
ամենաանհուսալի և փոփոխական է: Ծուսական
հողը հյուծված ե, վատ պարարտացվում ե և վատ
ել մշակվում: Այդ պատճառով ել տարեց-տարի
բերքը վատթարանում ե: Մեկ-յերկու լավ բերքից
հետո Ծուսաստանում լինում ե հսկայական ան-
բերրիություն կամ մի շարք տարիների անբերրի-
ություն»: (Ոսինսկի):

Մինչև հիմա գյուղացիները դժվարությամբ
են համոզվում գյուղատնտեսի տարածած նոր գյու-
ղատնտեսական ձևերի հետ, աշխատում են նախ-
նիկների պես, չեն անցնում բազմադաշտ սիստե-
մին և չեն կռվում վնասատուների դեմ:

Փոխանակ այն բանին, վոր գյուղատնտեսի
ղեկավարությամբ կռվեն դաշտային մկների և
վնասատուների դեմ և բարձրացնեն գյուղատնտե-
սության արտադրությունը, շատերը դեռ գեր ո-
դասում են աստվածային ոգնությունը:

Առաջադեմ գեղջկուհիները պետք ե ոգնեն 14-րդ
կուս. համագումարի վորոշումները կյանքի մեջ
կիրառելուն, այն ե՝ «ոգնել և զարկ տալ գյու-
ղատնտեսության բարձրացմանը, ուշադրություն
դարձնելով հողագործության կուլտուրայի վրա,
զարգացնել տեխնիկական կուլտուրան, բարձրաց-
նել հողագործության տեխնիկան (տրակտորնե-
րի գործածության, գյուղատնտեսության ինդուս-

տրավիզացիան, կանոնավորել հողաշխարարական գործերը) և ամեն կերպ ոգնել զանազան ձեի գյուղատնտեսության կուլեկտիվիզացիային»:

Յերբ մենք հաղթահարենք հետամնացությունը, բարձրացնենք կուլտուրան, այն ժամանակ այն թափը, վորը կա գյուղատնտեսության մեջ, կստանա հսկայական չափեր:

Գյուղատնտեսության բարձրացումը, հսկայական փոփոխություններ առաջացրեց իրանց գյուղատնտեսության մեջ:

Գյուղատնտեսության բարձրացմամբ նոր տընտեսական քաղաքականության պայմաններում առաջանում ե և գյուղի շերտավորումը: Այդ շերտավորումը նոր յերեսույթ չի հանդիսանում: Բայց նա ընթանում ե բոլորովին այլ պայմաններում—պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Խորհրդային իշխանությունը այդ բանից չի կարող խուսափել, այն պատճառով, վոր գյուղացիության տնտեսությունը զարգանում ե տարբեր ուժնությամբ: Այդ շերտավորումը Խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը նախատեսել ելին և առաջ:

«Նոր տնտեսական քաղաքականության անցնելը՝ գյուղում կը գտնի իր շերտավորման արտահայտությունը. մոտ ապագայում կավելանա և կուժեղանա վորոշ ժամանակով նոր գյուղացիական:

բուրժուազիան, մի կողմից առաջանալով հարուստ գյուղացիներից և մյուս կողմից պրոլետարիքացիայի կենթարկի չքավոր տարրերին»:

(XIV կուտ-կոնֆերենցիայի բանաձևերից):

Կոմմունիստական-կուսակցության XIV-րդ համագումարը վորոշեց տեսակարար կշիռը և վերաբերմունքը դեպի գյուղի յուրաքանչյուր խավը:

«Եթե չքավորությունը և առաջին հերթին բատրակները ներկայանում են պրոլետարիատի հենարանը գյուղում, ապա ուրեմն միջակ գյուղացին հանդիսանում ե և պետք է հանդիսանա նրա կայուն դաշնակիցը: Զի կարելի վոչ մի բոպե մոռանալ, վոր վոչնչացնելով կալվածատիրական հողատիրությունը, վորի հետևանքով և ամբողջ հողը անցավ գյուղացիության ձեռքը և հողի առևտուրը վերացնելով (հողի ազգայնացում) գյուղացիության միջակ խավը չափազանց ուժեղացավ և այդ մասը չնայած շերտավորման պրոցեսին կազմում են գյուղացիության հիմնական մասսան: Չունենալով այդ մասսան, վորպես կայուն դաշնակից կամ սահմանափակվել միայն շեղոքացնելով այդ շերտը, այժմ՝ պրոլետարական դիկտատուրայի ամրանալուց հետո, չի կարելի կառուցել սոցիալիզմ»: (XIV կու-համագումարի բանաձևերից):

«Զկա վոչ մի դեկրետ (որենք) Խորհրդային իշխանության վոչ մի վորոշում, վորտեղ շեշտված

չլինի գյուղացիների յերեք գլխավոր խմբերի տար-
բերությունը։ Առաջին խմբակը—չքավորությունն
ե (պլուղետար, կիսապրոլետար, ինչպես ընդուն-
ված ե ասել) տնտեսական գիտությունների մեջ)։
Այդպիսիների թիվը շատ-շատ ե։ Յերբ կալվածա-
տերերի և կապիտալիստների իշխանությունն եր,
ամբողջ լուծի ծանրությունն ընկնում եր չքավոր-
ների վրա։ Ամբողջ աշխարհում, սոցիալիստական
շարժման ամենակայուն հենարանը հանդիսանում
են բանվորները և նրանց աջակցող գյուղական չքա-
վորությունը։ Յերկրորդ խմբակը կուլակներն են,
այսինքն հարուստ գյուղացիները, վորոնք շահա-
գործում են ուրիշի աշխատանքը, կամ վարձելով
աշխատողներին, կամ դրամը շահով տալով և կամ
նման բաներ։ Այդ խմբակը ձեռք ե մեկնում կալ-
վածատերերին և դրամատերերին, Խորհրդային
իշխանության թշնամիներին։ Յերրորդ խմբակը
միջակ գյուղացին ե. նրանք Խորհրդային իշխա-
նության թշնամիները չեն. կարող են լինել նրա
բարեկամները, մենք դրան ձգտում ենք և նրան
կհասնենք։ Սոցիալիզմի բոլոր ուսուցիչները միշտ
ճանաչում ենին, վոր բանվորներն են կապիտա-
լիստների և կալվածատերերի իշխանության տա-
պալողը, վորպեսզի իրականացնեն սոցիալիզմը։
Բայց միջակ գյուղացիության հետ կարելի յե հա-
մաձայնության գալ և անհրաժեշտ ե համաձայ-

նությունը»: (Լենին, յերկերի ժողովածու ԽVI-րդ հատոր յերես 29):

Կուսակցությունը տալիս ե չքավորության հետ աշխատելուն հատուկ նշանակություն, չքավորությանը քաշելու հասարակական-քաղաքական ակտիվ աշխատանքի:

«Չքավորության մեջ աշխատելու փորձերը, առանձնապես վերջին խորհուրդների ընտրությունների ժամանակ, ամբողջապես հաստատեց կենտրոմի պլենումի վորոշման ճշտությունը չքավորության կազմակերպման մի շարք միջոցների ձեռնարկելուն: Չքավորների ժողովները և առանձին փորձերը նրանց խմբակների աշխատանքը կանոնավորելու, ցուցահանեցին խորհուրդների կենդանություն և աշխատությունների առեղծվեց լայն չափով անկուսակցականների ակտիվ մասսա: Այստեղ, վորտեղ աշխատանքը տարված ե չքավորության հետ, նկատվում ե նրանց քաղաքական ակտիվությունը, ավելի սերտ կապակցություն ե առաջացել չքավորի և միջակ գյուղացիության մասսայի կողմից կուսակցության և խորհուրդների հետ և լավ հետևանք ե ստացվել վերընտրություններից:

... Չքավորական խմբակներ կարող են կազմվել խորհուրդների, կոոպերացիայի և փոխոգկոմներին կից՝ չքավոր և բատրակ անդամներից.

ավելի կազմակերպված ուժերով գյուղի թույլ տնտեսությունների շահերը պաշտպանելու, այդ կազմակերպության միջոցով։ Զքավորների խըմբակի աշխատանքը սերտ կերպով կապված պետք է լինի համապատասխան կազմակերպությունների Փրակցիաների հետ։ Կենտկոմը առաջարկում է հատուկ ուշադրությամբ ուսումնասիրել չքավոր խմբակների փորձը, նորից պնդելով վճռական պայքար մղել բոլոր այն փորձերի դեմ, վոր ուզում են վերադառնալ չքավորների կոմիտեների աշխատանքներին (սիստեմին)։ (Կենտկոմի կազմ-բյուրոյի վորոշումներից)։ Գեղջկուհիները փոխողկոմներում։ 1925 թվ. Խորհրդ. Ռուսաստանում ընտրվել են 5·168 հոգի, իսկ 1926 թվին 5·581 գեղջկուհիներ։

ՆՅՈՒԻԹԵՐ 6-ՐԴ ԶԲՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Բանվորուհին գործարանում պատրաստում և չիթ և ուրիշ առարկաներ, վորոնցից ոգտվում է գեղջկուհին, գեղջկուհին պատրաստում է հաց, վորն ուտում և բանվորուհին։ Գյուղատնտեսությունը սերտ կերպով միացած է արդյունաբերությանը։

«Գյուղատնտեսությունը չի կարող ապրել, չի կարող իր գոյությունը պաշտպանել, չարտահանելով քաղաքի շուկան իր արտադրած գյուղատնտեսա-

կան մթերքները և հում նյութերը, վորի փոխարեն չստանա քաղաքից գործարանային արդյունաբերությունից աշխատանքի համար անհրաժեշտ գործիքներ։ Պետական արդյունաբերությունը նույնպես չի կարող զարգանալ, յեթե գյուղացիական շուկան չսպառի գործարանային ապրանքը, տալով նրա փոխարեն սպառելու նյութեր և արդյունաբերությանը հում նյութեր։ Հետեւաբար մեր սոցիալիստական արդյունաբերության դոյության աղբյուրը հանդիսանում է մեր ներքին շուկան և ամենաառաջինը գյուղացիական շուկան, գյուղատնտեսությունը։ Այդ պատճառով ել գյուղի և քաղաքի զողման (սմիջլայի) խնդիրը, հանդիսանում է մեր արդյունաբերության գոյության, պրոլետարիատի գոյության, մեր հանրապետության կյանքի և մահվան և վերջապես մեր յերկրի սոցիալիզմի հաղթության խնդիրը։ (Ստալին, 13-րդ կուս. համագումարի արդյունքները)։

Քաղաքի արդյունաբերությունը ինչ տվեց 1922/23

թվին գյուղական տնտեսությանը.


Գյուղատնտեսական գործիքներ	67,1
Շինարարական նյութեր	46,9
Տնտեսական »	63,9
Սպառման նյութեր (ուտելիք)	129,4
Հագուստեղեն և մանուֆակտուրա	178,7
Կոշկեղեն	122,9

**ՀԱՂՎԱԳՐԵՐԵՎԸ ԳՈՐԾՎ-
ՅԱԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ**


1923-27թ.

ԲԱՐՁՐԱԿ


(1000 ԴԱՎԱԿԱՆՆԵՐ)



ՏԻՒՐԿԱԿԱ ԲՈՅԱՐ



ՀԱՅԱՀԱՅԹԻՎԱՐ



Ի՞նչ տվեց գյուղական քաղաքին 1922/23 թվին
(հազարավոր ռուբլիներով)

Բամբակ	97,0
Վուշ	34,7
Կանեփ	4,9
Մետաքս	4,8
Բուրդ	47,4
Ճակնդեղ (շաքարի)	23,3
Կարտոֆիլ	1,6
Հաճար	0,2
Ծխախոտ տերևներով	6,5
Մախորկա	1,9
Կաշի	26,3
Սերմեր-ծիթաբույսեր	17,4

Հայաստանում գյուղատնտեսական գործիքների
տճռումը:

1923—24	1914—25	1925—26	1926—27
82	478	501	635

«Վորպեսզի գյուղատնտեսությունը զարդանաւ առաջ դնա, նա կարիք ունի այնպիսի նյութերի, վորոնք ինքը չի կարողանում պատրաստել այստանում ե մեր արդյունաբերության զանազան ճյուղերից: Յեթե մի որ մեր արդյունաբերության կյանքը կանգ առնի, այն ժամանակ գյուղատնտեսությունը կընկնի ցավալի դրության մեջ և

կմատնվի ամենախայտառակ, նախնական ձեր հողամշաման, լավագույն դեսպում նա կանգ կառնի իր յեղած գրությամբ և վոչ մի քայլ առաջ չի կարող դնալ: Ընդհակառակը, յերբ զարդանում ե արդյունաբերությունը (մետաղագործությունը պատրաստելով գյուղատնտեսական գործիքներ, հողի պարարտացման համար զանազան նյութերի պատրաստման և այլն), այն ժամանակ գյուղական տնտեսությունը կունենա այդ արդյունաբերությամբ իր հզոր ոգնականը, իր ուժեղ հենարանը, վորի չնորհիվ վերջի-վերջո կարող ե փոխել հողի մշակման հին ձեր և արագ կերպով առաջ մղել գյուղատնտեսության արտադրական ուժերը: (Բուխարին, «Սոցիալիզմի ճանապարհին»):

Արդյունաբերության անումը

«Յեթե վերցնենք ամբողջ արդյունաբերությունը և՛ պետական, և՛ կոնցեսիոն, և մասնավոր՝ 1913 թվին տվել ե 7 միլիարդի ընդհանուր արդյունք, 1924—25 թվին տվել ե 5 միլիարդի: Այդ կազմում և նախապատերազմյանի 71%: Մեր ծրագրային (պլանային) մարմինները յենթադրում են, վոր հետեւյալ տարին արտադրությունը կհասնի մինչև $6\frac{1}{2}$ միլիարդի, այսինքն նախապատերազմյան նորմայի 95%-ը: (Ստալին, Քաղհավետվու-

ԱՐԴՅՈՒՆՎԵՐԱԿՐՅԱ ԳԱՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

1924-27թ.

ԳԻՆՈՒ և ԿՈՆՅԱԿԻ
ԱՐԴՅՈՒՆՈՒԹ

368,400

22,200

25,200

1924-25թ.

1926-27թ.

ՊԵՂՋԻ
ԱՐԴՅՈՒՆՎԵՐՈՒԹ

1,362,300

210,500

669,600

1924-25թ.

1925-26թ.

1926-27թ.

ԵԵՐԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՎԵՐՈՒԹ

1,780,000

503,800

822,200

1924-25թ.

1925-26թ.

1926-27թ.

թյուն կոմկուսի 14-րդ կուս. համագումարին) :

Պետական և կոռպերատիվ արդյունաբերության մասը.

«Յեթե վերցնենք և համեմատենք պետական և կոռպերատիվ արդյունաբերությունը միասին, մասնավոր արդյունաբերության հետ կստանանք հետեւյալ պատկերը: 1923—24 թվ. պետական և կոռպերատիվ արդյունաբերությունը ամբողջ տարվա արդյունաբերության արտադրության գումարի 76%-ը, մասնավորը—23,7%: 1924—25 թվ. պետական և կոռպերատիվ արդյունաբերությունն արդեն կազմում եր 79,3%, իսկ մասնավոր արդյունաբերությունը վոչ թե 23,7% ե կազմում, այս իջել ե 20,7%: Մասնավոր արդյունաբերության տեսակաբար կշիռը այդ ժամանակամիջոցում ընկել ե արդեն: Առաջիկա տարում յենթադրվում ե, վոր պետական և կոռպերատիվ արդյունաբերությունը կկազմի մոտ 80%, իսկ մասնավոր արդյունաբերությունը կիշնի 20%-ի»: (Ստալին, Քաղ. հաշվետվութ. կենտկոմի 14-րդ կուս. համագումարին):

«Չնայած արդյունաբերության և ամբողջ ժողովրդի տնտեսության զարգացման, յերկիրը կրում ե վորոշ տնտեսական դժվարություններ՝ առաջին հերթին—ապրանքային սովլ: Այդ ապրանքային սովը առաջ ե յեկել գլխավորապես անհամապա-

տասխանության (դիսպրոպրօքտիայի) շնորհիվ՝ արդյունաբերության և գյուղատնտեսության միջև բացի այդ անձնական սպառման և արդյունաբերության ծախսերի անհամապատասխանության հողի վրա։ Իհարկե, ամբողջ զարդացումը և ամբողջ ինդուստրիալիզացիան, վերջին հաշվով ուղղված են անձնական սպառում ավելացնելու համար։ Յերբ այժմս մեր ունեցած դրուժարանային և այլ կահավորման դործիքները մաշվել են, յերբ մեր ունեցած դործիքները չեն բավարարում արտադրությանը, մենք պետք են չնայած մեր աղքատության միջոցներ դանենք ժողովրդի ամբողջ տնտեսությունից, վորակեսզի հնարավոր լինի վերականգնելու արտադրության դործիքները, վորոնք ճիշտ ե այսոր չեն տալու սպառման լայն միջոցներ, այլ կտան միայն մի, յերկու, յերեք տարուց հետո։ Ուրեմն, պետք ե, չնայած մեր աղքատության, տնտեսել վորոշ քանակությամբ նյութական հարստություն, վորակեսզի դործադրենք հենց այստեղ։ (Դերժինսկի)։

Տնտեսական դժվարությունները վերացնելու համար Համամիութ. կ. կ. Պլենումը համարեց անհրաժեշտություն, մի կողմից ամբողջ յերկրում կիրառել տնտեսման և խնայողական ռեժիմ, կռիվ մղելով զանազան ավելորդ, վոչ արտադրական ծախսերի դեմ, իսկ մյուս կողմից ուժեղացնել աղ-

գարնակության աղատ միջոցները՝ քաշել բոլոր տեսակի վարկերի, կոռպերատիվ կազմակերպությունների, պետական փոխատվման նպատակ ունենալով, այդ կուտակումները գործադրել յերկրի արդյունաբերական ուժերի զարգացման վրա և առաջին հերթին ինդուստրիալի զարգացման։ Մյուս կողմից կտրուկ միջոցներ ձեռնարկել աշխատանքի արտադրության բարձրացման, ինչպես արտադրության ոացիոնալիզացիայի, բանվորների վորակավորման բարձրացմամբ, Փարբիկա-գործարանային ձեռնարկությունների կազմակերպման բարելավման, այնպես ել բանվորական որվախտացմամբ, ուժեղացնելով աշխատանքի դիսցիլինան, կովելով աշխատավորների պարագ զբոսանքի դեմ։ (Կենտկոմի Պլենումի բանաձեկրից)։

«Այդ, մեր կուսակցության և խորհրդային խխանության առաջ կդնի այն խնդիրը, վորը կանդնեց 14-րդ կուս։ Համագումարի առաջ, դա մեր յերկրի ինդուստրիալիզացիայի խնդիրն ե, վորովհետեներկա արդյունաբերական մակարդակով, վոր մենք ունենք, առանց Լեհաստանի և Լիտվայի զավողների, վորոնք մեզանից բաժանված են, պետք է կառուցել մեծ քանակությամբ գործարաններ, վորպեսզի յերկրի արդյունաբերությունն առաջին ժամանակներում ազգաբնակության յուրաքանչյուր անդամին այնքան հասնի, վորքան եր նախապատե-

բազմյան ժամանակներում»: (Դերժիսկի, ԽՍՀՄ տնտեսության կառուցման մասին):

Տնայնագործական արդյունաբերությունը զգալի չափով կարող է վերացնել ապրանքային սովոր: Բուսաստանում մինչև պատերազմը շուկայի համար աշխատող տնայնագործների թիվը չորս միլիոնից ավել եր: Տնայնագործների արտադրած ապրանքների արժեքը հավասար եր 1390 միլիոն ռուբլու, այսինքն խոշոր արդյունաբերության մի քառորդ մասը: Վերջին տարիների ընթացքում արհեստը ուժեղ կերպով տուժեց: Բայց չնորհիվ մի շարք արտոնությունների, վոր տրված ե գյուղական տնայնագործին և արհեստավորին, չնորհիվ պետական ոգնության, վոր նրանց մատուցվում ե և չնորհիվ տնայնագործների միանալուն—տնայնագործական—արհեստավորական կոոպերացիայի տնայնագործական արդյունաբերությունը արագ թափով կվերականգնի:

Կանայք-գեղջկուհիները տնայնագործական արդյունաբերության մեջ խաղում են մեծ դեր: Կան արտելներ, վորոնց անդամները միայն գեղջկուհիներն են, որինակ, հաշիա (կրուժեվա) գործելու արտել, զանազան գործվածքների և այլն:

1924 թվին տնայնագործուհիների թիվը հասնում եր 88 հազարի, իսկ 1925 թվին արդեն հասել եր 180 հազարի: Զուլհակների մեջ գեղջկուհները

իազմում են 95,6%, իսկ հաշվայի (կրուժեվայի) արդյունաբերության մեջ՝ 74,1%-ը:

Ընկ. Լենինը մեծ նշանակություն եր տալիս մանր տնայնագործական արդյունաբերությանը:

«Կարիքը և յերկրի քայքայվածությունը այնպես ե, վոր միանգամից վերականգնեցնել պետական սոցիալիստական գործաքանային արտադրությունը անհնարին ե: Դրա համար հարկավոր է հացի հսկայական պաշար, վառելիքի և հում նյութեր արդյունաբերական կենտրոններում, հարկավոր ե հին մեջենաները փոխել նորերով և այլն:

Մենք փոքրձով համոզվեցինք, վոր չի կարելի այդ անել միանգամից և մենք գիտենք, վոր իմպերիալիստական ավերիչ պատերազմից հետո սույնիսկ առաջավոր յերկրները չեն կարող ուղղվել կարճժամանակամիջոցում և կարող են միայն մի շաբթ տարիների ընթաքում լուծել այդ խնդիրը: Աւրեմն անհրաժեշտ ե վորոշ չափով ոգնություն հասցնել մանր արդյունաբերությունը բարձրացնելու համար, վորը չի պահանջում մեջենաներ, վոչ պետական առանձին ծախսեր, վոչ մեծ քանակությամբ հում նյութերի պաշար, վառելիք, սպաման նյութեր, վորն անմիջականապես կողնի դյուդացության տնտեսությանը և կրարձրացնի նրա արտադրական ուժերը»:

Միաժամանակ վերացնելով ապրանքային սովոր

և ուրիշ տնտեսական դժվարությունները, յերկրի առաջ կանգնած է հիմնական խնդիրը—յերկրի ինդուստրալիզացիան, առանց վորի չեւ կարելի հասնել տնտեսական անկախության և միշտ ԽՍՀՄ-ը կախում կունենա կապիտալիստական պետություններից: «Նրանք (բուրժուական պետությունների կապիտալիստները) կուզենյախն մեղ սահմանափակել միայն ասենք չթի արտադրությամբ, բայց դա մեզ համար քիչ է, վորովհետեւ մենք կուզենք վոչ միայն չիթ այլև մեքենաներ, վորն անհրաժեշտ է չիթ արտադրելու համար: Մենք պետք ենք բոլոր ուժերը կենտրոնացնենք, վորպեսզի տնտեսապես անկախ վիճակ ստեղծենք, քանի դեռ շրջապատված ենք կապիտալիստներով»: (Ստալին քաղ-հաշվետվություն կենտկոմի 14-րդ համագումարին:

ՆՅՈՒԹԵՐ 7-ՐԴ ԶԲՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

«Յուրաքանչյուր գյուղական տնտեսություն շահագրգուված է նրանով, վորպեսզի հեշտ և ձեռնտու գներով ծախի իր արտադրության մթերքները, բոլոր գյուղական տնտեսությունները շահագրգուված են նրանով, վոր հնարավորին չափ ձեռք բերեն արժան գնով իրենց անհրաժեշտ մըթերքները քաղաքի արդյունաբերությունից և բացի այդ սպառման պահանջը (մանուֆակտուրա,

կոչկեղեն և նման արդյունքներ անմիջական գործադրման սպառման համար) արդյունաբերության գծով պահանջը (բազմատեսակ միջոցներ արտադրության համար այն ե՛լավ տեսակի սերմեր, գյուղատնտեսական գործիքներ և այլն): Յուրաքանչյուր փոքր-մասնավոր գյուղական տնտեսություն, շահագրգուված ե այն բանում, վորպեսզի կարիքի դեպքում ունենա ավելի արժան վարկ: Եեվ ահա այդ հանգամանքը, մասնավոր գյուղական մանր տնտեսություններին, թելադրում ե և քաշում դեպի կոռպերատիվ միավորներ ստեղծելու ճանապարհը: Այդ կերպ ե յեղել ամենուրեք, բացարձակապես բոլոր յերկրներում: Վորպեսզի ավելի պակաս գներով կարողանան դնել արդյունաբերության արդյունքները, կամ ուրիշ յերկրների գյուղատնտեսական մթերքները (որինակ լավ սերմացուներ, կամ լավ անասուններ կամ նրանց արդյունքները և այլն), գյուղացիությունը կազմակերպում եր գնման կոռպերատիվ ընկերություններ: (Բուխարին, «Սոցիալիզմի ճանապարհին»):

Գյուղատնտեսական կոռպերացիան

«1924 թվի հունվարի 1-ից մինչև 1925 թիվ հուլիսի 1-ը կոռպերացման յենթարկված գյուղական տնտեսությունների քանակը 1,790,000-ից հասել ե մինչև 5,000,000, այսինքն մոտ յերեք ան-

դամ : Այդպիսով մենք ունենք գյուղկոռակերացիայի հսկայական աճեցում»: (Մոլոտով, 14-րդ կուս. Համագումարի զեկուցումից) :

«Նախապատերազմյան շրջանում վարկային և գյուղատնտեսական կոռակերացիայի մեջ գյուղացիությունը իր վարկավճարները հասցըել եր 500,000,000 ռուբլու, իսկ այժմս ընդամենը 2,000,000 ռուբ.»: (Բրոնին, «Կոմկուսը և գյուղացիությունը») :

«Համագումարը արձանագրում է, վոր գյուղատնտեսական կոռակերացիան իր տնտեսական աշխատանքով, և' մասսային գրավելու տեսակետից, և' ուղիղ սոցիալիստական զեկավարման տեսակետից, դեռ չառ հեռու յե իր մեծ դերը կատարելուց : Համագումարը պարտավորեցնում է կուսակցության բոլոր անդամներին ամենաուշադիր կերպով հետևել գյուղատնտեսական կոռակերացիայի զարգացմանը և ձեռք առնել բոլոր միջոցները ապահովելու նրա ճիշտ աճումը»: (14-րդ կուս. Համագումարի բանաձեռքից) :

«Գյուղատնտեսական կոռակերացիան տվել է չորս միլիոն ռուբլի ոգուտ»: (Մոլոտով) :

Գյուղատնտեսական կոռակերացիայի անումը

«1924 թվի հունվարի 1-ին կառ 19,700 գյուղատնտեսական կոռակերացիվներ, 1925 թվի մա-

յիսի 1-ին 25,000, 1925 թվի հուլիսի 1-ին 27,000: 1924 թվի հունվարի 1-ին կոռագերացման յէնթարկված տնտեսությունների թիվը հասնում էր 1,470,000, 1925 թվի հունվարի 1-ին 2,540,000»: (Քաղզրագիտ. դասագրքից . . .):

Հայաստանում Գլուղատնակական կոռագերացիան ունեցել է հետեւալ աճումը: 1924 թվի առ 1-ին հոկտեմբերի յեղել է 12 տիպի ընկերություններ, վլորուց թիվը հասնում էր 76-ի 1925 թվի առ 1-ին հոկտեմբեր 12 տիպի 76 ընկ. Առ 1-ին հունվար 26 թվի - 12 տ. — 156 ընկ.:

Տնտեսությունների կոռագերացումը: Առ 1-ին հոկտեմբերի 24 թ. 8,919 տնտեսութ.՝ Առ 1-ին հոկտեմբերի 1925 թ. 19,153 տնտ.: Առ 1-ին հունվարի 1926 թ. 21,348 տնտ.:

Սեփական միջոցների աճումը: Առ 1-ին հոկտեմբերի 1924 թվի 103,337 ր.: Առ 1-ին հոկտեմբերի 1925 թ. — 230,949 ր.: Առ 1-ին հունվարի 1926 թ. 283,545 ր.:

«Կոռագերացիան, ինչպես առևտրի ձև, ձեռընտու և ոգտավետ է, քան մասնավոր առևտուրը, վորովհետեւ կոռագերացիան հեշտացնում և միացնում է կազմակերպության մեջ միլիոնավոր ազգաբնակչություն, հետո ամբողջ ազգաբնակչությանը առանց բացառության, իսկ այդ հանդամանքը առաջին հերթին հսկայական պլյուս է պետական

կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու տեսակե-
տից»: (Անին) :

Փայտերերի ժանակը

	Քաղաքում	Դյուզում
1924 թվի հոկտ. 1-ին 5,575,729		3,529,102
1925 թվի հոկտ. 1-ին 9,347,908		4,307,308

Վարկային կոռպերացիա

«Գյուղական տնտեսությունների վարկային
միավորումների հիմնական և սկզբնական տեսակը
պետք է հանդիսանա Գյուղատնտեսական վարկա-
յին Ընկերությունները, միջնորդական ֆունկցիա-
ներով: Ընկերությունների հիմնական գործունեու-
թյունը պիտի ուղղված լինի դյուզացիության
խնայողության դրավումով, ավանդների ձեռվ և
վարկային գործողությունների համար»: (14-րդ
կուսկոնֆերենցիայի բանաձեռից) :

Վարկային կոռպերացիան, տալով վարկ գնելու
համար գյուղատնտեսական մեքենաներ, սերմա-
ցու և այլն, գյուղատնտեսության բարձրացման մի-
ջոց է հանդիսանում:

«Ս. Ա. Հ. Միության մեջ ներկայումս հաշվ-
վում է (1925 թ.) ընդամենը մոտ 8,000 ընկերու-
թյուն, վորոնք վարկավորում են գյուղերին
այսինքն միջին հաշվով մի ընկերություն հասնում
է մի մեծ շրջանի: Այդ բոլոր ընկերությունների

տարեկան շրջանառությունը արդեն բավականաչափ
բարձրացել է 150 միլիոն ռուբլուց»: (Քաղղրագի-
տության դասագրքից, կրծատ դպրոցների հա-
մար) :

Տնայնագործական կոռպերացիա

«Ավելի նպատակահարմար է բավարարել այդ
պահանջը (գյուղերին արդյունաբերական ասլ-
րանքներ) վորքան հնարավոր և տնայնագործական
արդյունաբերությունից: Բացի դրանից տնայնա-
գործական արդյունաբերության մի շարք ճյուղեր
ծառայում են այնպիսի տնտեսական կարիքների,
վորոնք վոչ մի դեպքում չեն կարող ապահովվել
մեր արդյունաբերության աշխատանքներով: Այդ-
պիսով խնդիրը այն մասին է, թե՝ ինչպես վե-
րացնել գյուղի աղքատությունը, վորտեղ գտնել
աշխատանք ձիազուրկների համար, այդ կապված
և մանր տնայնագործական արդյունաբերության և
արհեստների դարգացման հետ: Այդ պատճառով
վերջերումս հրատարակվեց հատուկ որենք տնայ-
նագործներից տուրքերի ծանրությունը վերացնե-
լու մասին»: (Միկով, «Գյուղը», յերես 31-32):

Կոռպերացիան պիտի հաղթի գյուղական
խանութին.

«Գյուղական մասնավոր առևտրականի խանու-
թին մենք չպետք են հակադրենք ուժի և բռնության
որդաններ, այլ մեր լավ կոռպերատիվ խանութը:

Գյուղական վաշխառուն, վորը իր փողերը տալիս է վարկով և ստանում անաստված տոկոսներ, կամ այն, վոր տալիս է իր ձին վարձու ձիազուրկ գյուղացուն ստրկական հիմունքներով, մենք պետք ե կազմակերպենք գլխավորապես վարկային ընկերություններ, լավ կազմակերպված կոռպերատիվ արժան վարկ և պետական իշխանության կողմից ոգնություն։ Մեր ապրանքները պետք ե լինի վորակով լավ և արժան քան մասնավոր առևտրականինը, մեր վարկերն անհամեմատ արժան պիտի լինեն, քան վաշխառուի. կոռպերացիան պիտի լավ առևտուր անի և հարմարվի տեղական բոլոր պահանջներին, քան մասնավոր առևտուրը։ Ահա այն զենքերը, վոր մենք դործադրելու յենք գյուղի շահագործող տարրերի դիմաց»։ (Բուխարին)։

Լենինը կոռպերացիային մեծ նշանակություն էր տալիս գյուղը սոցիալիզմին մոտեցնելու գործում։

«Վոչ բոլոր ընկերները հաշիվ են տալիս իրանց այն մասին, թե այժմս ինչ հակայական, անըմբոնելի նշանակություն ունի մեղ համար Ռուսաստանը կոռպերացման յենթարկելը։ Նոր տնտեսական քաղաքականությամբ մենք մեծ զիջումներ արեցինք գյուղացուն, ինչպես առևտրականի, մասնավոր առևտրի սկզբունքով. հենց դրանից ե վոր բզիսում ե (հակառակ դրան, վոր մտածում են) կոռպերա-

ցիայի հսկայական նշանակությունը։ Նոր տնտեսական քաղաքականության շրջանում, կոռուպերացման յենթարկել լիազես և խորը կերպով ոռւս աղդաբնակությանը՝ այդ այն բոլորն ե ինչ վոր մեղ պետք ե, վորովհետև այժմս մենք գտել ենք մասնավոր առևտրի միացման աստիճանը, նրանից բղիսած շահերը, պետական կոնտրոլը և ստուգումը, վորն առաջ հնարավոր չեր վոչ մի հասարակակարգի։ Իրոք, բոլոր խոշոր արտադրության միջոցներին իշխում ե պետությունը, պետության իշխանությունը գտնվում ե պրոլետարիատի ձեռքը և այդ պրոլետարիատը ունի միլիոնավոր մանր գյուղացիների հետ դաշինք և վորով ապահովվում է գյուղացիության ղեկավարումը պրոլետարիատի կողմից։ Մի՛թե այդ բոլորը չե, ինչ վոր պետք է նրա համար, վորպեսզի կոռուպերացիայից, միայն կոռուպերացիայից, վոր առաջ մենք արհամարում ենք, վորպես առևտրական մի ձեռնարկ և վորն այժմս ել իրավունք ունենք վորոշ տեսակետից արհամարելու նոր տնտեսական քաղաքականության շրջանում, այդպես, միթե այդ բոլորն չե՞, վոր կարող ենք կառուցել իսկական սոցիալիստական հասարակարգը։ Այդ դեռ չի նշանակում սոցիալիստական հասարակակարգի կառուցումը, բայց այդ բոլորը անհրաժեշտ ե և բավական՝ կառուցման համար։ (Լենին, կոռուպերացիայի մասին)։

կոռապերացիայի աշխատանքը գյուղում դեռ իր բարձրության վրա չի կանգնած։ Դեռ ազգաբնակության պահանջներին լրիվ չի բավարարում, անհրաժեշտ ապրանքներ հայթայթելով։ Դեռ ապրանքները կոռապերատիվում թանգ ե, դեռ վատ և ծառայում գեղջկուհու շահերին։

«Կոռապերացիան միայն ցուցանակ չպետք է լինի, վոչ միայն կոռապերացիայի անունը, այլ և այն կազմակերպությունը, վոր պիտի ստեղծի սոցիալիստական հասարակակարգ։ Վորպեսզի այդ գառնաիրականություն, անհրաժեշտ է աշխատանք թափել կոռապերացիան առողջացնելու համար։ Յեթե դուք տեսնեք կոռապերացիայի և մասնավոր տուուրի ապրանքի գները կհամոզվեք, վոր կոռապերացիան շատ չնչին տարրերությամբ արժան է վաճառում մասնավորից։ Այս անաստված ցածր տոկոսը, խորհրդային շինարարության ընթացքում տանել չի կարելի։ Մենք տեսնում ենք, վոր մեր կոռապերացիան այս շրջանում մեծ մասամբ աշխատում է ուրիշի դրամներով։ Այս տարի նա աշխատել է 70 միլիոնից վոչ պակաս։ Մեզ անհրաժեշտ է, վոր կոռապերացիան ազգաբնակությունից գրավեիր անհրաժեշտ միջոցները»։ (Դերժինսկի, «Տնտեսական շինարարության մասին»)։

Կոռապերացիայի մինչև այժմս ունեցած թերությունները վերացնելու համար կենտկոմի պլենումը

ցիայի հսկայական նշանակությունը։ Նոր տնտեսական քաղաքականության շրջանում, կոռոպերացման յենթարկել լիապես և խորը կերպով ոռւս աղգաբնակությանը՝ այդ այն բոլորն եւ ինչ վոր մեզ պետք ե, վորովհետև այժմս մենք դտել ենք մասնավոր առևտրի միացման աստիճանը, նրանից բղխած շահերը, պետական կոնտրոլը և ստուգումը, վորն առաջ հնարավոր չեր վոչ մի հասարակակարգի։ Իրոք, բոլոր խոշոր արտադրության միջոցներին իշխում ե պետությունը, պետության իշխանությունը գտնվում է պրոլետարիատի ձեռքը և այդ պրոլետարիատը ունի միլիոնավոր մանր գյուղացիների հետ դաշինք և վորով ապահովվում է գյուղացիության ղեկավարումը պրոլետարիատի կողմից։ Մի՛թե այդ բոլորը չե, ինչ վոր պետք ենրա համար, վորպեսզի կոռոպերացիայից, միայն կոռոպերացիայից, վոր առաջ մենք արհամարում եյինք, վորպես առևտրական մի ձեռնարկ և վորն այժմս ել իրավունք ունենք վորոշ տեսակեաից արհամարելու նոր տնտեսական քաղաքականության շրջանում, այդպես, միթե այդ բոլորն չե՛, վոր կարող ենք կառուցել իսկական սոցիալիստական հասարակարգը։ Այդ դեռ չի նշանակում սոցիալիստական հասարակակարգի կառուցումը, բայց այդ բոլորը անհրաժեշտ եւ բավական՝ կառուցման համար։ (Լենին, կոռոպերացիայի մասին)։

կոռապերացիայի աշխատանքը գյուղում դեռ իր բարձրության վրա չի կանգնած։ Դեռ ազգաբնակության պահանջներին լրիվ չի բավարարում, անհրաժեշտ ապրանքներ հայթայթելով։ Դեռ ապրանքները կոռապերատիվում թանգ են, դեռ վատ և ծառայում գեղջկուհու շահերին։

«Կոռապերացիան միայն ցուցանակ չպետք է լինի, վոչ միայն կոռապերացիայի անունը, այլ և այն կազմակերպությունը, վոր սկիտի ստեղծի սոցիալիստական հասարակակարգ։ Վորպեսզի այդ գաւնա իրականություն, անհրաժեշտ է աշխատանք թափել կոռապերացիան առողջացնելու համար։ Յեթե դուք տեսնեք կոռապերացիայի և մասնավոր առետուրի ապրանքի գները կհամոզվեք, վոր կոռապերացիան շատ չնչին տարրերությամբ արժան է վաճառում մասնավորից։ Այս անաստված ցածր տոկոսը, խորհրդային շինարարության ընթացքում տանել չի կարելի։ Մենք տեսնում ենք, վոր մեր կոռապերացիան այս շրջանում մեծ մասամբ աշխատում է ուրիշի դրամներով։ Այս տարի նա աշխատել է 70 միլիոնից վոչ պակաս։ Մեզ անհրաժեշտ է, վոր կոռապերացիան ազգաբնակությունից գրավի իր անհրաժեշտ միջոցները»։ (Դերժինսկի, «Տնտեսական շինարարության մասին»)։

Կոռապերացիայի մինչև այժմս ունեցած թերությունները վերացնելու համար կենտկոմի պլենումը

վորոշեց հետեւյալ միջոցները կիրառել կյանքի մեջ՝

1) Գյուղացիության լայն մասսաների ինքնագործունեությունը գրավել դեպի կոռագերատիվ շենարարությունը։

2) Ապահովել չքավոր և միջակ գյուղացիության շահերը կոռագերացիայի մեջ, կուիվ մղելով կուլակ տարրերի կոռագերացիայի ոգտագործման փորձերի դեմ։

3) Խիստ կերպով կրծատման յենթարկել կոռագերատիվ շրջանառության վերադիր ծախսերը։

4) Կոռագերատիվ առեւտրի ապադա զարգացմամբ մասնավոր կապիտալի դերը նվազեցնել և վճռական կուիվ մղել գների իջեցման համար։

5) Գյուղի ազգաբնակության լայն մասսաների ազատ միջոցները գրավել դեպի վարկային և կոռագերատիվ կազմակերպությունները։

6) Բոլոր միջոցները ձեռնարկել վարկային դիսցիպլինան ամրացնելու համար։

7) Ռւժեղացնել կոռագերացիայի մասնագիտական տեսակները, վորը միացնում եւ արդյունաբերող գյուղացիությանը և մանավանդ գյուղատնտեսության մեքենայացման գործին։

Այդ խնդիրները կարող են իրականանալ այն դեպքում, յերբ ընդհանրապես կոռագերացիայի գործնեությունը կրարելավվի, նրա հեղինակությունը կրարձրանա գյուղացիական մասսայի

տնտեսական կյանքում և ապահովված կլինի նրա մարմինների ընտրությունն ու պատասխանատվությունը մասսայի առաջ»: (1926 թվի Համ. Կ. (Բ) Կ. Կոմի ապրիլի պլենումը):

Կոռպերացիայի առողջացման համար ձեռք առած միջոցների շարքին անհրաժեշտ է հատուկ ու շաղրություն դարձնել գեղջկուհիներին կոռպերացիայի ասպարեզ քաշելու վրա:

Մինչ այժմս կոռպերացման յենթարկված գեղջկուհիների թիվը կազմում էր՝ 1925 թ. հունվարի 1-ին 336,621 կամ գյուղի կոռպերացման յենթարկված մասսայի 8,3%-ը. 1925 թ. հունվարի 1-ին դարձավ 527,584 կամ 9,3%-ը:

Այդ քանակությունը չափազանց չնշին է համեմատած գեղջկուհու գյուղատնտեսությանը մասնակցելու տոկոսի հետ: Գեղջկուհի-պատղամավորուհին որինակելի պիտի դառնա աշխատելով կոպերատիվի խանութային Հանձնաժողովի, Վարչության, Վերստուղիչ Հանձնաժողովի մեջ: Այդ կոռպերացիային կմոտեցնի ազգաբնակության շահերին, այդ կողմնի գյուղում կոռպերացիային իր վրա դրած խնդիրների լուծմանը:

Հայաստանի Սպառողական կոռպերացիայի աճումը: Առ 1-ն Հոկտեմբերի 1914 թ. 68 ընկերութ. 158 խանութ.՝ 25,404 անդամ: Առ 1-ն Հոկտեմբերի 1925 թ. 68 ընկերութ. 276 խանութ.՝ 45,807 անդամ: Առ 1-ն Հոկտեմբերի 1926 թ. 81 ընկերութ.

309 խանութ. 65,749 անդամ:

Ապրանքային շրջանառությունն աճել է: 1924-
25 տնտ. տարրում 8,612,155 բուրլու: 1925 - 26
տնտ. տարրում 13,838,888 բուրլու:

ՆՅՈՒԹԵՐԻ 8-ՐԴ ԶԲՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Բանվորների և գյուղացիության հիմնական
մասսայի՝ չքավորների և միջակների ընդհանուր
շահերի միացնում ե իրար: Նրանք միատեսակ շա-
հագրգոված են բանվորա-գյուղացիության պետու-
թյան ամրապնդումով և սոցիալիզմի կառուցման
խնդրով:

«Յերկու դասակարգերի հիմնական և ընդհա-
նուր շահերը կայանում ե նրանում, վոր միասին
ընթանում են դեպի սոցիալիզմ, վոր անհնարին և
առանց բանվորի և գյուղացու դաշինքի ամրապնդ-
ման, և առանց բանվոր դասակարգի այդ դաշինքում
դեկավար գերի: Բայց այդ հիմնական և արմատական
շահը բանվոր դասակարգի և գյուղացիության, իր
արտահայտությունը գտնում ե արդյունաբերու-
թյան և գյուղատնտեսության փոխադարձ ոլոնո-
թյան անհրաժեշտության մեջ, վորոնք իրանց հիմ-
քում միմյանցից կախում ունեն: Մեր արդյունաբե-
րությունն աշխատում է, ինչպես մենք այդ մասին
արդեն ասել ենք, առաջին հերթին գյուղացիական
շուկայի համար: Նա, առաջ ել իր դարգացման ըն-

թացքում կախում ուներ այդ չուկայից, բայց պրո-
 յետարական դիկտատուրայի պայմաններում նա
 անխուսափելիորեն կախման մեջ եւ այդ չուկայից
 ավելի մեծ չափով, քան հին ռեժիմի ժամանակ
 Առաջինը մեզ համար դոյություն չունեն արտաքին
 շուկաներ, վորովհետև մենք չենք տանում այն թա-
 լանի քաղաքականություն, քաղաքականություն՝
 նոր շրջաններ ձեռք բերելու համար, վոր տանում եր
 ցարիզմը: Յերկրորդ՝ մենք չենք անում նավատորմի
 պատվերներ, ծովային-պատերազմական սպառա-
 գինում և ընդհանրապես հսկայական պատերազմա-
 կան պատվերներ, վորովհետև մենք անչափ քիչ ենք
 ծախսում մեր զինվորական կարիքների համար.
 Վորովհետև մեր նպատակն ե միայն յերկիրը պաշտ-
 պանիլ և վոչ մի նվաճողական նպատակներ չու-
 նենք: (Սրանից ծագում ե անհրաժեշտություն, վոր
 մի շարք պատերազմական նյութերի արտադրու-
 թյան զավողները դարձրել ենք խաղաղ կյանքի ան-
 հրաժեշտ արտադրության և առաջին հերթին գյու-
 ղատնտեսական դործիքներ և ինվենտար արտադրե-
 լու և գյուղատնտեսական աշխատանքը կանոնավո-
 րելու համար): Յերրորդ՝ քաղաքական անհրաժեշ-
 տություն պրոլետարիատի դիկտատուրայի ամրա-
 պնդումն և բանվոր դասակարգի աղդեցությունը
 գյուղացիության վրա ուժեղացնելու անհրաժեշ-
 տությունը թելադրում ե մեծ ուշադրություն դար-
 ձնել գյուղական չուկայի վրա:

Մեր արդյունաբերության զարգացումը, այսպիսով, կախում ունի գյուղացիության տնտեսությունից: Մեր արդյունաբերությունը զարգանում է ավելի ուժեղ թափով, յերբ գյուղացիության գնողունակությունը ավելանում է և պահանջը շատանում: Արդյունաբերության կուտակում այնքան արագ է կատարվում, վորքան այդ տեղի յե ունենում մեր գյուղացիության տնտեսության մեջ, այսինքն վորքան գյուղացիական տնտեսությունն ազատվում է աղքատությունից, վորքան նա հարստանում է և գնում գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ, վորքան նա արագացնի տեխնիկայի դարդացումը և անցնի հողի նոր մշակման ձևին, այդ ժամանակ նա հնարավորություն կունենա քաղաքի արդյունաբերությունը սպառելու: Իր հերթին գյուղացիական տնտեսության զարգացումը անխմաստ է առանց քաղաքի արդյունաբերության զարգացման: Վորպեսզի գյուղատնտեսությունը գնա առաջ, նա կարիք ունի այնպիսի արդյունքների, վորոնք ինքը չի արդյունաբերում, այլ ստանում է մեր արդյունաբերական զանազան ճյուղերից: Յեթե մի դեղեցիկ որ դադարի մեր արդյունաբերական կյանքը, այն ժամանակ գյուղատնտեսությունը կընկներ ցավալի կացության մեջ, նա պիտի սահմանափակվեր ամենանախնական, ամենահին հողի մշակման ձևին: Լավագույն եպքում նա պիտի անշարժության մատնվեր և վո-

մի առաջադիմության քայլ չաներ։ Յեվ ընդհակառակը, յեթե աճում է արդյունաբերությունը (մետաղագործությունը—պատրաստելով գյուղատնտեսական մեքենաներ, հողի պարատացման համար զանազան քիմիական միջոցների պատրաստում և այլն) այն ժամանակ գյուղատնտեսությունը կունենա հանձինս արդյունաբերության իր հուժկու աջակիցը, իր հենարանը, վոր վերջի-վերջո կարող ե վերացնել հին ձևերի հողի մշակությունը և արագ կերպով զարգացնել ամբողջ գյուղատնտեսության արտադրողական ուժերը։ Այդպիսով արդյունաբերությունը իր զարգացման համար կարիք ե զգում գյուղատնտեսության հաջողությունների և ընդհակառակը գյուղատնտեսությունը իր հաջողությունների համար կարիք ե զգում արդյունաբերության զարգացմանը։ Այդ փոխադարձ կախման մեջ լինելը հանդիսանում է ամենաարմատականը, վոր ինքնըստինքյան պիտի բնորոշի դեկավար կուսակցության կողմից տարված ուղիղ քաղաքականությամբ, վորի պարտականությունն առաջին հերթին կայանում է նրանում, վորպեսզի մասնակի և անցողակի, վայրկենական և ժամանակավոր, յերկրորդական և քմահաճույքային շահերը հպատակեցնել մշտական, ավելի ընդհանուր, ավելի հիմնական և արմատական շահերին։ (Բուխարին, սոցիալիզմի ուղին և բանվորագյուղացիության դաշինք)։

Բանվոր դասակարգի և զյուղացիության դաշինքը սկիզբ առավ Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական կռվի ժամանակ:

«Ինչո՞ւ մենք հաղթեցինք քաղաքացիական կռվի ժամանակ, վորը տեսեց մի շարք տարիներ: Մեր Հոկտեմբերյան հաղթությունից հետո, մեր դեմ համախմբվեցին արտասահմանյան կապիտալիստները, վորոնք շտապ կերպով ոգնության հասան ռուսական բուրժուազիային: Մեր յերկրի բուրժուազիան և նրա ղինված ուժերը ամեն տեսակի ոգնություն եյին ստանում մի շարք բուրժուական հզոր պետություններից, թե ղինվորա-քաղաքական և թե Փինանսական: Հաճախակի մեր խորհրդային յերկիրն ընկնում եր հրային ողակի մեջ, շրջապատված եր չորս կողմից թշնամու զորքերով: Յեղան մոմենտներ, յերբ խորհրդային հանրապետությունը հավասարվում եր մի քանի նահանգների, յենթակա լինելով թշնամիների միացյալ դունդերի հարձակմանը: Յեղան մոմենտներ, յերբ մնմիջական վտանգի յեր յենթարկվում Պետրոգրադը՝ պլրոլետարական հեղափոխության առաջավոր քաղաքը: Դենիկինը մոտենում եր Ռոյոյ քաղաքին, իսկ Մոսկվայում սպիտակ դավադիրները կազմակերպել եյին իրանց շտապը և սպաների դունդը, վոր կարիք յեղած դեպքում վոչնչացնեյին, «Կոչունիստական շներին»: Մենք տանջվեցինք անբնոր-

հատ ամբողջ ամիսներ, կտրված լինելով նավթից, ածուխից և հացից: Մենք ապրեցինք ամբողջ տարիներ, շարունակ պաշարված բերդի դրության պես, չորս կողմից, վորտեղ արգեն սկսվել եր սովուն ու մահը: Յեվ այնուամենայնիվ մենք հաղթեցինք, այդ բացառիկ և դաժան քաղաքացիական կովում, վոր տեղի յեր ունենում շահագործողի և շահագործվողի միջև, կապիտալիստների և կալվածատերերի մի կողմից և բանվորների ու գյուղացիների՝ մյուս կողմից: Վո՞րտեղ են այդ հաղթանակի արմատները:

Այդ արմատները՝ առաջին հերթին այն հանգամանքներում են, վոր Արևմտյան աշխատավոր մասսան, յերբեմն գիտակցարար, իսկ յերբեմն ել հպատակվելով իրանց դասակարգային ինստիկտի ձայնին, մեր կողմն եյին անցնում, դիմադրելով իրանց պետերին, իրանց պետությանը, իրանց հրամատարներին և այլ տարբեր ձևերով խանգարում եյին իրանց կառավարությունների դահճային գործերին, վորոնցով ուզում եյին խեղղել մուսատանի հաղթական հեղափոխությունը: Շատ անգամ պատահել ե, վոր արտասահմանյան դնդերը բարձրացնելով կարմիր դրոշակներ թողել հեռացել են մեր ֆրոնտից:

Յերկրորդ, մեր հաղթանակի ներքին պատճառը հանդիսանում եր բանվորների և գյուղացիների ԾՐԱԳՐԱՑԻՆ ՆՑՈՒՑԵՐ.

Դաշինքի ամուր լինելը։ Գյուղացիներն ողնում եյին բանվորներին թշնամիների դեմ կռվելուն, վորոնք սմեն կողմից շրջապատել եյին նրան։ Բանվոր դասակարգի և գյուղացիության այդ պատերազմական դաշինքը շարունակությունն ու զարգացումն երայդ յերկու դասակարգերի Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակվանից»։ (Լենին, Վ-րդ կուհամագումարի գեկուցումից)։

Սրանից կարելի յէ հետեւեցնել, թե բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ ի՞նչ նշանակություն ունի սոցիալիստական կառուցվածքի համար։

«...Մենք կհաղթանակենք վերջնականապես, մենք կհաղթանակենք լիովին և ամբողջապես, մենք իսկապես կհիմնենք նոր աշխատանքային հասարակարգ միայն այն ժամանակ, յեթե այդ խաղաղ, վոչ պատերազմական պայմաններում, կարողանանք նորից ամրացնելու այն դաշինքը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության, վորը ապահովեց մեր հաղթանակը հեղափոխության ամբողջ ընթացքում։ Ահա թե ինչո՞ւ մենք նորից ու նորից պետք է գնենք պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի խնդիրը»։ (Բուխարին, սոցիալիզմի ուղին)։ Յերբ մենք խոսում ենք բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մասին, մենք պետք ենքենք, վոր գյուղացիությունը միատարր չե։

Գյուղացի յե կոչվում և հարուստ պանդոկապետը, գյուղական վաշխառուն, կուլակը, գյուղացի կոչվում և և ուժեղ տանտերը՝ վորը ունի մի քանի բատրակներ, ստանում և նրանց աշխատանքի ոգուտը պահում և նրանց սանձած։ գյուղացի յե կոչվում աշխատավոր տանտերը, վոր աշխատում և իր ընտանիքի հետ ինքն իր համար և չի ապրում ուրիշի աշխատանքով։ գյուղացի յե կոչվում և չքավորը՝ ձիազուրկ, հազիվ-հազ ծայրը ծայրին և հասցնում և հաճախ աշխատում և ուրիշների մոտ, վերջապես գյուղացի յե կոչվում և կիսաբատրակ-կիսաբանվորը, վորի համար նրա գյուղական տընտեսությունը համարվում է ապրուստի չնչին աղբյուր»։ (Բուխարին, սոցիալիզմի ուղին)։

Կարող են լինել միատեսակ, ամեն մի գյուղական խմբակ, բանվորին դաշնակցելու սոցիալիզմը կառուցելու գործում։ Բոլորին այդ պարզ և, վոր անհնարին ե։ Գյուղում պրոլետարիատի խսկական հենաբանը հանդիսանում է չքավոր և բատրակ գյուղացին, միջակը կարող ե և պետք և լինի ուժեղ դաշնակից։ Իսկ կուլակի դեմ պետք ե պայքարել։

Ահա թե ինչ ասեց ՏՎ-ըդ կուս-համագումարն այդ մասին։ «Յեթե չքավորությունն և ամենից առաջ բատրակները գյուղում հանդիսանում են վորպես պրոլետարիատի նեցուկներ, ապա միջակը հանդիսանում է և պետք է հանդիսանա ուժեղ դաշ-

նակից։ Զի կարելի վոչ մի բռպե մոռանալ, վոր վերացնելով կալվածատիրական հողատիրությունը և կարվածատերերի հողերը հանձնելով գյուղացիությանը, և վերջապես հողը վորպես ապրանքաշրջանառության առարկայի վերանալը, (հողի ազգայնացումը) գյուղացիության միջակ տարրը չափազանց ուժեղացավ և վոր այդ միջակ տարրերը այժմս կազմում են, չնայած գյուղի դիմերենցացիայի ընթացքին, գյուղացիության հիմնական մասսան։ Չունենալով այդ մասսային վորպես դաշնակցի կամ սահմանափակվի միայն նրանց չեղոքացնելով, այժմ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդվելուց հետո չի կարելի սոցիալիզմ կառուցել։ Վորովհետեւ սոցիալիստական շինարարության հիմնական ճանապարհը գյուղի համար հանդիսանում է այն, վորպեսզի վերաշինվող տնտեսության զեկավարությամբ՝ սոցիալիստական պետարդունաբերության, պետական վարկային հիմնարկների և այլ հրամանատարական բարձրունքներից, վորոնք գտնվում են պրոլետարիատի ձեռքում, գրավել գյուղացիության հիմնավոր մասսային կոռպերատիվ կազմակերպությունների մեջ և այդ կազմակերպությունների սոցիալիստական զարգացումը ապահովել, ոգտագործելով հեռացնել և դուրս վանելով նրա կապիտալիստական տարրերը։ Այդ պատճառով միջակ գյուղացու վերաբերմամբ ամեն

մի թերագնահատում, չհասկանալով նրա բացառիկ դերի կարևորությունը, դանազան փորձերը կուսակցությունը հեռացնելու նրանից և վերացնելու նրա հետ ամուր դաշինքի լողունգը՝ փոխելով հինացած լողունգով չեկոքացման «վախ միջակներից» որեկտիվորեն կվնասեն պրոլետարիատի դիկտատուրային, վորովհետեւ դրանով խախտված կլինի բանվորա-գյուղացիական բլոկը»: (XIV կուսամագումարի բանաձեռից) :

Բանվոր դասակարգը առանց գյուղացիության դաշինքի չի կարող կառուցել սոցիալիզմ: Նա չեր կարող մենակ հաղթել բուրժուազիային և հաստատել Խորհրդային իշխանություն:

Գյուղացիությունը մենակ, ինքնուրույն, առանց բանվոր դասակարգի ոգնության և ղեկավարման չի կարող առաջ գնալ, չեր կարող և վոչնչացնել կալվածատերերին և կապիտալիստներին: Բանվորա-գյուղացիական դաշինքում ղեկավարման դերը պատկանում է պրոլետարիատին: Բնկ. Լենինը սովորեցրել ե.

«Բուրժուազիայի տիրապետությունը կարող է խորտակել միայն պրոլետարիատը վորապես հատուկ դասակարգ, վորի գոյության տնտեսական պայմանները, պատրաստում են նրան և ուժ ու հնարավորություն են տալիս իրագործելու այդ խորտակումը: Այն ժամանակ, յերբ բուրժուազիան

բաժան-բաժան և անում, ցրում և գյուղացիությունը և բոլոր մանր բուրժուական տարրերը, նա միացնում է, համախմբում և կազմակերպում սլրոլետարիատը։ Միայն պրոլետարիատն է, չնորհիվ նրա խոշոր արտադրության մեջ ունեցած նշանակությանը, ընդունակ է դառնալու բոլոր աշխատավորների և շահագործվող մասսայի ղեկավարը, վորոնց բուրժուազիան շահագործում է, տանջում, ճնշում և հաճախ ավելի շատ՝ քան այն պրոլետարներին վորոնք ընդունակ չեն ազատության համար ինքնուրույն կովելու։ (Լենին, յերկերի ժողովածու XIV հատոր, մաս 2-րդ «Պետություն և հեղափոխություն»)։

Բանվորա-գյուղացիական դաշինքը դարձնեց կոմունիստական կուսակցությունը ընկ. Լենինի ղեկավարությամբ։ Առանց, ուժեղ կազմակերպված, միասնական, կոմունիստական կուսակցության չեյին կարող հաղթել բանվորները և գյուղացիները Հոկտեմբերին, չեյին կարող հաղթել բազմաթիվ թշնամիներին և չեյին կարող կառուցել սոցիալիզմ։

«Կոմունիստական կուսակցությունը պետք է բանվոր դասակարգին վոչ միայն մինչև իշխանությունը նվաճելու ժամանակ և վոչ միայն իշխանությունը նվաճման ընթացքում, այլ և իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքն անցնելուց հետո։

Ռուսաստանի կոմունիստական կուսակցության պատմությունը, յերեք տարի իշխանության*) դրալուխ կանգնելով այս հոկայական յերկրում, ցույց է տալիս, վոր կոմունիստական կուսակցության դերը, բանվոր դասակարգի կողմից իշխանությունը նվաճելուց հետո, վոչ թե նվազել ե այլ բնդհակառակը՝ անհամեմատ աճել ե :

Առանց կուսակցության, բանվոր դասակարգը չեր կարողանա /նվաճել իշխանությունը. կուսակցությունն այդ բանվոր դասակարգի շտապն է : Կուսակցության մեջ այդ պատճառով պիտի լինի ամուր դիսցիպլինա»: (Լենին, «Զախության յերեխայական հիվանդությունը» կոմունիզմի մեջ) :

ՆՅՈՒԹԵՐ Գ-ՐԴ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Լենինը սովորեցրեց, վոր առանց բանվորուհու և դեղիկուհու մասսայական մասնակցության անհնար է կառուցել սոցիալիզմ :

«Մեզ պետք է կազմակերպչական աշխատանք վոչ միայն մի լիոնների մասշտաբով: Մեզ պետք է կազմակերպչական աշխատանք ամենափոքր մասշտաբով, վորը հնարավորություն կտա աշխատելու և կանանց: Կինը կարող է աշխատել պատերազմական պայմաններում, յերբ բա-

*) Գրած է 1920 թվին:

նակին ողնելու կարիք և զգացվում, և նրա
մեջ ազիտացիա տանելուն: Կինն այդ բոլորի մեջ
ակտիվ մասնակցություն պիտի ունենա, վորպեսզի
կարմիր բանակը տեսնի, վոր իրա մասին մտածում
էն: Կինը կարող ե աշխատել և մննդամատակարար-
ման ասպարեզում, մթերքների բաշխման գործում,
մասսայի սննդի գործը բարելավելու և այնպիսի
ձաշարանների տարածման և կանոնավորման աշ-
խատանքով, վորոնք այժմ լայն չափով գոյություն-
ունեն Պետրոգրադում...

...Ահա ինչպիսի ասպարեզներում կին-բան-
վորուհու գործունեյությունը ձեռք կրերի իսկական
կազմակերպչական նշանակություն: Կնոջ մասնակ-
ցությունն անհրաժեշտ է նաև խոշոր փորձնական
տնտեսությունների կազմակերպման և նրա հետեւ-
լու գործում, վորպեսզի այդ գործը մեզ մոտ չլինի
միակողմանի գործ: Առանց մեծ քանակությամբ
աշխատավոր կանանց մասնակցության, այդ ան-
հնարին ե կատարել: Յեվ կին-բանվորուհին լիովին
կարող ե աշխատել այդ գործում, նա կարող ե ար-
դյունքների բաշխմանը լավ հետեւել, հսկել, վոր
արդյունքները հեշտությամբ ձեռք բերվեն: Այդ
խնդիրը լիովին կարող ե տանել անկուսակցական
աշխատավոր կինը և ի միջի այլոց այդ խնդրի կի-
րառումը կարող ե ողնել, ավելի շուտ ամրապնդել
սոցիալիստական հասարակակարգը...

... Վերացնելով հողի մասնավոր սեփականության իրավունքը և համարյա ամբողջովին վերացնելով, այդ՝ գործարանների և զավողների վերաբերմամբ, խորհրդային իշխանությունը ձուռում է այն բանին, վոր բոլոր աշխատավորները, վոչ միայն կուսակցականները, այլ և անկուսակցականները, վոչ միայն տղամարդիկ, այլ և կանայք մեր տնտեսության շինարարության մասնակցեն։ Այդ խորհրդային իշխանության սկսած գործը, կարող է առաջ գնալ միայն այն ժամանակ, յերբ ամբողջ Ռուսաստանում հարյուրավոր կանանց փոխարեն միլիոն և միլիոն կանայք մասնակցեն։ Այն ժամանակ սոցիալիստական շինարարական գործը, մենք հավատացած ենք վոր ամբապնդված կը լինի։ Այն ժամանակ աշխատավորությունը կապացուցի, վոր նրանք կարող են ապրել և տնտեսությունն վարել առանց կալվածատերերի և կապիտալիստների։ Այն ժամանակ սոցիալիստական շինարարությունը Ռուսաստանում կլինի անչափ ամուր, վոր ուրիշ յերկրների վոչ մի արտաքին թշնամի ինչպես և Ռուսաստանի ներսի՝ խորհրդային հանրապետությանը չի սարսափեցնի։

Ընկ. Լենինը, մատնանշելով բուրժուազիայի ազատության վերաբերյալ կեղծ լողունգները, կանանց իրավագրկությունը կապիտալիստական յերկրներում, առաջադրեց բանվոր դաստիարագին կա-

նանց ազատագրման և իրավահավասարության համար պայքարելու խնդիրը։ Դեռ պատերազմի ժամանակ ընկ. Աենինը դրեց այն մասին, վոր անհրաժեշտ ե՝ «Վերացնել առանց բացառության, բոլոր քաղաքական իրավունքների անհավասարությունը, վոր տղամարդու և կնոջ ունեցած իրավունքները լինեն հավասար և այդ բարեփոխության խսկական իմաստը լայն կերպով բացատրել մասսային»։

Կանանց՝ բանվորուհու և գեղջկուհու ազատագրման խնդրով շահագրգոված են բոլոր աշխատավորները, վոչ միայն տղամարդիկ, այլ և կանայք։ Յեթե բանվորուհին անգրագետ ե վոչ վորակյալ, նա կխանգարի արդյունաբերության բարձրացմանը։ Բանվորուհիները կազմում են ամբողջ բանվորության մեկ չորորդ մասից ավելին։ Յեթե գեղջկուհին լինի տղետ, ճնշված, հետամնաց, նա կխանգարի բազմադաշտ սիստեմին և հողի մշակման կատարելագործված ձևերին անցնելուն։ Գրագետ, առաջադեմ բանվորուհիները և գեղջկուհիները Սոցիալիզմի կառուցմանը չեն խանգարում այլ կողնեն։

«Հետեւելով սոցիալիստական գաղափարին. մենք պետք ե կովենք մինչև սոցիալիզմի իրականանը և այստեղ կանանց համար բացվում ե աշխատանքի լայն ասպարեզ։ Մենք հիմա լուրջ կերպով

հող ենք պատրաստում սոցիալիստական կառուցվածքի համար, իսկ սոցիալիստական հասարակակարգի կառուցվածքը կսկսվի այն ժամանակ միայն յերբ մենք կհասնենք կանանց վիակատար հավասարության և կձեռնարկենք նոր աշխատանք նրանց հետ միասին, և յեթե կինը ազատ կլինի մանր-բթացնող, վոչ արդյունաբեր աշխատանքից : Այդ աշխատանքը մեզ կզբաղեցնի շատ և շատ տարիներ»: (Լենին) :

«...Կանանց մասնակցությունը կուսակցական և խորհրդային աշխատանքի մեջ այժմս ունի հսկայական նշանակություն, վորովհետեւ պատերազմը վերջացել եւ սկսվել է խաղաղ կազմակերպչական աշխատանք, հույսով եմ, յերկար ժամանակ, առաջին դերը խաղան, և նրանք իհարկե այդ կանեն»: (Լենին) :

Կոմունիստական կուսակցությունը Լենինի պատգամները կատարում եւ: Հսկայական աշխատանք եւ տարվում այն ուղղությամբ, վոր գեղջկուհու և բանվորուհու իրավունքները փաստորեն հավասարվեն: Կուսակցությունը ստեղծեց հատուկ ապարատ—կին-բաժիններ, վորի վրա դրեց բանվորուհիների և գեղջկուհիների միջև աշխատանք տանելու պարտականությունը: Կուսակցությունը կազմակերպում է պատգամավորական ժողովներ, վորտեղ բանվորուհիների և գեղջկուհիների մեծ

մասը սովորում են յերկիր կառավարել և խոր-
հուրդների յերկրում սոցիալիզմ կառուցել:

Համամիութենական կոմունիստական կուսակ-
ցության կ. կ. ավագ քարտուղար ընկ. Ստա-
լինը պատգամավորական ժողովների մասին ասեց
հետեւյալը. «Այդ, կարող ե պատահել, անտեսանե-
լի, բայց շատ կարեոր և եյական մի մեխանիզմ ե,
վոր մեր կուսակցությանը միացնում ե բանվոր դա-
սակարգի կանանց մասի հետ»: (Ընկ. Ստալինի ԽII
կուս-համագումարում արտասանած ճառից):

Կուսակցության կ. կ.-են, ստուգելով պատ-
գամավորական ժողովները ասեց՝

Բանվորուհիների և գեղջկուհիների պատգա-
մավորական ժողովների աշխատանքի փորձերը
Համ. կ. կ. ղեկավարությամբ, լիովին արդարա-
ցրեց իրան, և ցույց տվեց, վոր տվյալ ձեւը հանդի-
սանում ե աշխատավոր կանանց լայն մասսաների
քաղաքական ակտիվության բարձրացման դործում
հիմնականը և վոր կստեղծի կուսակցության կող-
քին նրանցից վորոշ կադր: (1925 թվի կ. կ. Պլենու-
մի վորոշումներից):

«Պատգամավորական ժողովների աշխատանք-
ներին պետք է մեծ ուշք դարձնեն բոլոր կուսակցա-
կան կազմակերպությունները, հիշելով այն հան-
գամանքը վոչ միայն կին-բաժինների աշխատանք և
այլ և ամբողջ կուսակցության աշխատանք, մանա-

վանդ այդ միջոցով առաջ պետք է քաշել մեծ քանակությամբ բանվորուհիներին և գեղջկուհիներին պատասխանատու աշխատանքների, խորհրդային, կոռպերատիվ և արհմիութենական կազմակերպությունների մեջ»: (XIV կուս-կոնֆերենցիայի կուսշինարարության բանաձևերից) :

Պատգամավորական ժողովների աշխատանքը ղեկավարում և տեղական կուս-բջիջները: Բջիջները անցկացնելով կուսակցության հրահանգները գյուղերում պատասխանատու յեն կուսակցության առաջ իրանց տարած աշխատանքների համար: Պատգամավորուհին պետք է առաջին ոգնականը լինի կուսակցության համար և գյուղում լենինյան պատգամներ տարածող, վորովհետև պատգամավորուհուն հետեւելով, գեղջկուհիների ամբողջ մասսան կհավասարվի նրան:

Այս տարվա մայիս ամսուն Մոսկվայում կայացավ կոմունիստկաների միջազգային խորհրդակցությունը, վորին ներկա եյին մեծ մասսամբ կապիտալիստական յերկրների կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչները (Անդրիայի, Գերմանիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Չեխո-Սլավակիայի, Լեհաստանի և այլն): Կոնֆերենցիան նշեց բոլոր կապիտալիստական յերկրների աշխատավոր կանանց վատթարացած դրությունը և աշխատավորության կողմից դեպի

Խ.Ս.Հ.Մ.-ին աճող համակրանքը։ Խորհրդակցությունը վորոշեց Խ.Ս.Հ.Մ.-ի որբնակով կազմակերպել պատգամավորական ժողովներ և ամեն կերպ գրավել բանվորուհիներին և գեղջկուհիներին պատրաստելու բուրժուազիայի դեմ տարվող հեղափոխական կռվին։

ՆՅՈՒԹԵՐ 10-ՐԴ ԶՐՈՒՑՑԻ ՀԱՄԱՐ

Գյուղացիների և գեղջկուհիների դրության հաետամնացության պատճառը, վորոշ չափով հանդիսանում է ցարական ռեժիմի որով գյուղացիության յերեխաներին տված դաստիարակությունը։ Յերեխաներին նրանք չելին սովորեցնում, այլ ներշնչում եյին վախենալու կալածատերերից և ուրիշնիկներից։ «Թող ապրեն այնպես, ինչպես ապրել են մեր պատգերն ու նախնիկները», այսինքն անգրագետ և հնազանդ, ասում ե ունեորների իշխանությունը։ Իսկ աշխատավորների համար ավելի դինետուն և բանդեր, քան դպրոցներ։ «Բանվորները և գյուղացիները կլինեն կապիտալիստներից և կալվածատերերից ճնշված այնքան ժամանակ, վորքան ժամանակ դպրոցները կմնա կալվածատերերի և կապիտալիստների ձեռքին, իսկ յերիտասարդների սերունդը կմնա կույր և խավարի մեջ»։ (Լենին, 1920 թվի Ռ. Լ. Կ. Յ. Մ.-ի Յ-րդ համագումարին արտասահման ձևություն)։

Առօհքային իշխանության որոք, գպրոցն աշխատում ե ստեղծել գյուղական յերիտասարդությունից, սոցիալիզմի համար գիտակից մարտընչողներ :

«Մեր գպրոցը յերիտասարդությանը պիտի սագիտության հիմունքները, պատրաստի ինքնուրույն ըմբռնելու կոմունիստական հայացքները, և պատրաստի նրանցից կրթված մարդիկ : Պետք ե վոր գպրոցը, քանի դեռ մարդիկ այնուեղ սովորում են, պատրաստի նրանցից, շահագործողների դեմ պայքարողների և ազատության կովին մասնակցողներ» : (Լենին, նույն տեղում) :

«Այն սերունդը, վոր այժմս 15 տարեկան և, նականի կոմունիստական հասարակարդը և ինքը պիտի կառուցի այդ հասարակակարդը» : (Լենին) :

Այդ աշխատանքին ոգնում են և պատանեական կուսակցական կազմակերպությունները—Կոմյերիտմիությունը և պիոներները :

«Կոմունիստական յերիտասարդական միությունը միայն այն ժամանակ կարդարացնի իր կոչումը, յեթե նա՝ միությունն ե կոմունիստական յերիտասարդ սերնդի և, յեթե նա իր ուսուցման բոլոր քայլերին, դաստիարակության և կրթության ընթացքում կապված կլինի և կմասնակցի աշխատավորությունը շահագործողների դեմ տարվող պայքարին : Վորովհետեւ դուք շատ լավ գիտեք, վոր

Խուսաստանը դեռ միակ բանվորական հանրապետությունն է, իսկ մնացած ամբողջ աշխարհում գոյություն ունի բուրժուական հասարակակարդը, մենք նրանցից թույլ ենք, վոր մեզ ամեն անդամ սպառնում ենոք հարձակում, և յեթե մենք սովորենք ձուլվելուն, միանալուն, մենք կհաղթենք ապագա կռիվներում և ամրապնդվելով կղառնանք անհաղթելի:

Այդպիսով, լինել կոմունիստ, նշանակում ե կազմակերպել և միացնել աճող սերունդին, որինակ դառնալ տարվող պայքարի, դաստիարակության և դիսցիպլինայի: Այն ժամանակ, դուք կարող եք սկսել և վերջացնել, կոմունիստական հասարակակարգի չենքը:

Իինել յերիտասարդության միության անդամ, նշանակում ե գործը տանել այնպես, վորպեսզի իր աշխատանքը, իր ուժերը տրամադրել ընդհանուր գործին: Ահա դրանումն ե կայանում կոմունիստական դաստիարակությունը: Միայն նման աշխատանքով յերիտասարդ տղան կամ աղջիկը կղառնախկական կոմունիստ, միայն այդ դեպքում ե, յեթե այդ աշխատանքի միջոցով կկարողանան դորձնական արդյունքների հասնել, նրանք կդառնան կոմունիստներ»: (Լենին):

«Գյուղական կոմյերիտոմիության ամբողջ աշխատանքի մեջ առաջին տեղը պետք ե բռնի դյու-

զատնեսության բարձրացման աշխատանքը։ Պետք է ամենից առաջ սովորեցնել, յերիտասարդության ինչպես կարելի յեւ աստիճանաբար վերաշինել ամբողջ տնտեսությունը և դարձնել նրան ավելի ամուր և շահավետ։ Կարճ ժամանակամիջոցում գյուղերում առաջացավ 13.000 յերիտասարդական դյուզատնեսական խմբակներ։ Այդ խմբակների մեջ մանում են բացի կոմյերիտմիութենականներից, և անկուսակցական յերիտասարդություն ու հասակավոր գյուղացիներ։

Ի՞նչ են անում այդ գյուղատնեսական խմբակները։ Նրանք առաջին հերթին ուսումնասիրում են տվյալ չըջանի տնտեսության շահավետության և բերքի բարձրացման միջոցների մասին։ Նրանք ծանոթանում են այդ նյութերին գյուղատնեսի գասախոսության, ուրքերի և ամսադրերի (ամսագիր «Դու քեզ համար գյուղատնես ես») միջոցով։ Նրանք հավաքում են և ուսումնասիրում, իրանց գյուղի, շրջանի առաջավոր տնտեսությունների հաջողությունները։ Ստացված արդյունքները նըրանք ստուգում են փորձերի միջոցով, կամ յուրաքանչյուրն իր տնտեսության վրա և փորձում, կամ միասին փորձադաշտում, կամ գլոբուցական բանջարանոցում և կամ թե չեւ վորխողնության կոմիտեների դաշտերում։ Խմբակները գյուղատնեսական դիտելիքները տարածում են գյուղացիության

մեջ, ընթերցանության միջոցով, դրույցի և գլխավորապես վորոշ ցուցմունքների միջոցով։ Նրանք իրանց վրա յեն վերցնում անցկացնելու, այն բաղմաղան գյուղատնտեսական նոր միջոցները, վորարգեն հնարավոր և գյուղական տնտեսությունների մեծադույն մասում։ Այսպես, որինակ, չատտեղերում նրանք կազմակերպում են սերմացուների զոման և տեսակավորման գործը ցանքոից առաջամառը թունավորում են գաշտային մկներին և ուրիշ վնասատուներին, աշնանը տանում են ցրտից շուտ մրսող ցանքուերի համարելու կամպանյա։ Իմբակները իրանց աշխատանքը սկսում են սովորաբար գործնական փոքր աշխատանքներով, փորձում են ձմբանը փարախները տաքացնել, կովերին նորմայով կերակրել, աճեցնում են լավ, ցեղային խողեր, տնկում են արմատապուղներ և այլն։ Շատ տեղերում գյուղատնտեսական խմբակները մեծ հաջողությունների են հասել, իրանց տարածաշխատանքներով։ Շատ գյուղեր նրանց ձեռներեցությամբ անցել են բազմադաշտ սիստեմին, լուծում են տվել հողաշխնաբարական խնդրին, հիմնել են մեքենայական ընկերություն և այլն։

Պետք ե հատուկ ուշք դարձնել աղջիկների մեջ տարվելիք աշխատանքներին։ Գյուղական աղջիկը ամենից քիչ ե մասնակցում հասարակական կյանքին։ Պետք ե գյուղական աղջկան դրավել դեպի

ընթերցանությունը, զբույցը, գրավել անգրագիտությունը վերացնող խմբակների մեջ, պետք է ստեղծել խմբակներ՝ տնային տնտեսության, — կար ու ձեի, վորից հետո հասարավոր կլինի քաշեկնքան ավելի լայն հասարակական աշխատանքների մեջ:

Անկուսակցական յերիտասարդության մեջ տարվող աշխատանքների մեջ, աչքի ընկնող տեղը, պետք է բռնի դիտակցարար հանդստի, և աշխատանքի խնդիրը: Պետք է հետ կանգնեցնել յերիտասարդությունը հարբեցողությունից, սրիկայությունից և նման արարքներից: Ընդհանուր աշխատանքների շարքին, յերիտասարդության կուլտուրական մակարդակի բարձրացման հետ, պետք է ուշք դարձնել գրադարան-ընթերցարանի, թատրոնի, յերեկույթների, և բացի այդ սովորական կազմակերպված յերեկույթներում մտցնել նոր բովանդակություն»: (Քաղ-գրագիտ. դասագրքից):

Ընկ. Լենինը ասում է. «Ռւզիդ իմաստով կարելի յե ասել, վոր յերիտասարդությանն ե վիճակվում կոմունիստական հասարակություն ստեղծելու խնդիրն, քանի վոր պարզ է կապիտալիստական հասարակարդում աշխատող և դաստիարակվողների սերունդը, ամենաբարենպաստ պարագայում կարող ե լուծել կապիտալիստական հին կենցաղի հիմքերը, վոր հիմնված ե շահագործման

վրա։ Նա լավագույն դեպքում կարող է լուծել, այնպիսի հասարակարգ ստեղծելու խնդիրը, վոր կողնի պրոլետարիատին և աշխատավոր դասակարգին պահելու իշխանությունը իր ձեռքը և ստեղծել ամուր հիմք, վորի վրա կարող է կառուցել, այն սերունդը, վոր աշխատանքի յե անցել նոր պայմաններում, այնպիսի ոլայմաններում, վորտեղ չկա շահագործական վերաբերմունք մարդկանց միջե։ (Լենին, Յ Կոմյերիտ. Համագումարի ճառը)։

Պատգամավորուհին պետք է ամեն կերպ ողնի կոմյերիտմիությանը, նրա աշխատանքներին, քաշելով աղջկան կոմյերիտմիության շաբաթերը։ Լենինը սովորեցրել է, թե ինչպիսի դեր պետի խաղա մայրը, յերիտասարդության դաստիարակության գործում։


«Դու շուտով մեծանալու յես։ Քեզ կտան հրացան։ Վերցրու և սովորիր զինվորական գործը։ Այդ դիտությունն անհրաժեշտ է պրոլետարիատի համար, վոչ նրա համար, վորպեսզի գնդակ արձակի իր յեղայրների վրա, ուրիշ յերկրների բանվորների վրա... Ինչպես խորհուրդ են տալիս քեզ սոցիալիզմի դավաճանները, այլ նրա համար, վորպեսզի կովենք բուրժուազիայի դեմ, վորպեսզի վերջ դնենք շահագործմանը, աղքատությանը և պատերազմներին, վոչ նրանց հոժար կամքուվ, այլ

ԿԱՆԱԿԱՆ ՌՈՒՎԱԾ Լ. Խ. ՖԻ. ԱՐ.-Ի ՀԱ ԿՈՄԱԿՈՒՄ


ԿՈՄԱԿՈՒՄ ԱԽԱԴՐԱՆԱ

ԿՈՄԱԿՈՒՄ ԱԽԱԴՐԱՆԱ


Լ. Կ. ՅԱ. Մ. ԱԽԱԴՐԱՆԱ



Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ



Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ



Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ Հ Յ

բուրժուազիային հաղթելով և զինաթափ անելով
նրան :

Գեղջկուհին Կոմյերիտմիության մեջ

Կ. Յ. Ռ.	Մ.	Բոլոր անդ.	Վորոնցից
		գյուղում	գեղջկուհիներ

1925 թվին . . .	535·500	65·867
1926 թվին . . .	950·000	152·950

Հասարակական գաստիարակությունն ունի մեծ և վճռական նշանակություն, հենց յերեխայի մանկությունից սկսած : Գեղջկուհուն ողնության են հասնում մանկական կոմունիստական կազմակերպությունները (պիոներները և հոկտեմբերիկները) : «Պատանի պիոներները, նրանք նոր կենցաղի, նոր գաղափարների, նոր հասարակություն բերողներն են : Նրանց միջոցով այդ «նորը» աննկատելի առվակներով պիտի հոսի դեպի գյուղ, բոլոր ժամանակներում, նրա տնտեսական, քաղաքական և ընտանեկան կյանքում : Աննկատելի և անդադար այդ պատանի պիոներները պիտի քաշ տան, դառամած և կորացած հին գյուղը» : (Կալինին) :

Պիոներները վոչ միայն իրանց են վերադաստիարակում, այլ աշխատում են ազգել իրանց ծնողների վրա, ողնելով նրանց վերաշինել կյանքը :

Պատգամավորուհին պետք է առաջինը լինի, իր յերեխաներին ուղարկելով պիոներական կազ-

մակերպության և Հոկտեմբերիկների խմբակը։
Վորքան յերեխաները չառ լինեն պիոներների և
Կ. Յե. Մ. մեջ, այնքան գյուղում ավելի կլինեն
Լենինի գործի գիտակից պայքարողներ՝ սոցիալիզմ
կառուցելու համար։

Պիոներների անումբ ԽՍՀՄ-ում

Պիոներների ընդհանուր թվիվ նրանցից
աղջիկներ

1925 թվի հունվարի 1-ին	1.000.032	412.550
		(41,3%)
1926 թվի հունվարի 1-ին	1.586.689	621.830
		(39,2%)

Հոկտեմբերիկների թիվը ԽՍՀՄ-ում

1926 թվի մայիսի 1-ին	259.808
----------------------	---------

ՆՅՈՒԹԵՐ 11-ԻՆ ԶԲՈՒՑՅԻ ՀԱՄԱՐ

Պատգամավորուհին գյուղի, վորպես առաջա-
վոր և ավելի գիտակից գեղջկուհի, պետք է կյանքի
մեջ կիրառի Լենինի պատղամները։ Նա պետք է
ոգնե ամեն կերպ կուսակցությանը և խորհրդային
իշխանությանը, վերակազմելու վոչ միայն տնտե-
սությունը, այլ և յերեխաների դաստիարակու-
թյունը։ Պետք է անային տնտեսությունը վարե նոր
ձեերով։ Տնտեսության նոր կուրուրական ձեե-

թին անցնելը բարձրացնում է նրա արգյունքը։
 Տնային կենցաղի վերակազմումը, նորաստում և
 տնտեսության բարելավմանը, մեծացնում և առողջ
 յերեխաներ և ողնում է սոցիալիզմի կառուցման։
 Դեռ սոցիալիզմի մեծ ռւառւցիչ Մարքսը, սովորեցրել է այն, վոր քիչ ժամանակ չի պահանջվում
 նրա համար, վորպեսզի վոչ միայն վերակառւցել
 տնտեսությունը այլ և վերադաստիարակել մարդկանց սոցիալիզմի համար։ Լենինը շատ անգամներ
 խոսել է այն մասին, վոր պետք է կենցաղի մեջ
 մտցնել հեղափոխություն «ի՞նչ է նշանակում կուլ-
 տուրական հեղափոխություն։ Այդ նշանակում է
 այնպիսի հեղաշրջում մարդկային կյանքի մեջ,
 նրանց կենսական սովորություններում, նրանց
 զգացմունքներում և ցանկություններում, նրանց
 ապրելակերպի, նրանց կենցաղում այնպիսի հե-
 ղաշրջում, վոր նրանից տուժացան նոր մարդիկ»։
 (Լենին)։

Պատգամավորուհին պետք է օրինակ լինի ա-
 ռաջինը՝ թե ինչպես պետք է ապրել նոր կենցա-
 ղով։ Նա պետք է իր տնտեսության մեջ ցույց տա-
 բազմադաշտային սիստեմին անցնելու որինակը։
 Տրակտոր մտցնելու ազիտատոր պետք է հանդիսա-
 նա, տնտեսությունը կոլլեկտիվ կերպով վարե, նո-
 պետք է լավ խնամք տանի անասուններին և թըո-
 չուններին։ Նրա մոտ—խրճիթում պետք է լինի մա-

քուր, յերեխաները մաքուր և լավ հաղնված։ Այն հանգամանքը, վոր իրեն մոտ խրճիթում կպահպանվի մաքրություն, այնտեղ ապրողները, բոլորը կլինեն առողջ։

Պատղամավորուհին ամեն կերպ պետք է սրայքարի հարբեցողության և հայհոյանքի դեմ, վորը հանդիսանում է հին ցարական կարգերի մնացորդ, վոր յերկիրը պահած էր խավարի հետամնացության մեջ։

«Մենք պետք են հասնենք նրան, վորպեսզի բարձրացնենք վողջ տղղարնակության կուլտուրական մակարդակը, ազատել նրան այդ ծանր պայմաններից, յերբ մարդն ինչպես առում են դարդից խմում են, յերբ ողու մեջ նա տեսնում են միակը—թեկուզ մթագնող, թեկուզ հարբեցուցիչ։ Բայց ուրախացնող։ Մենք պետք են հասունացնենք և ստեղծենք այնպիսի առողջ սերունդ, վոր զգաւրախություն հենց այն բանում, վոր ինքը աղտովել և այդ թույնից։

Այն պայքարը հարբեցողության դեմ, վորին մենք կոչ ենք անում, նկատի աւնենք բոլորովին այլ հակադրություն։ ոգնել մարդակային այն լուրջ սերունդի հասունացմանը, վոր կզզվեր ամեն տեսակ շշմեցուցիչ յերեսույթներից, վորը հասարակական գործունեյության մեջ, կյանքի նոր ձևերի ստեղծման մեջ կկարողանա դանել իր կյանքի ու-

բախությունը»: (Յարոսլավսկի):

Հատկապես մեծ աշխատանք պետք է տանի պատգամավորուհին մայրության և յերեխայության պահպանման ասպարիզում: Պայքարելու յերուր տեսակի հեքիմության (տատմերների) կախարդությամբ պարապողների դեմ: Նա պետք է աշխատի գեղջկուհիների ինքնագործունեյությանը զարկ տալու, գյուղում մանկական հիմնարկներ—մասուրեր բանալու, մանկական հրապարակներ, մանկական կոնսուլտացիաներ, վոր կողնե առողջությունդի հասունացմանը: Նա պետք է ողնե բժշկին և մանկաբարձուհուն զրույցներ կազմակերպման՝ սանիտարակ լուսավորության գործին:

«...Յեվ հենց այստեղ ե, վոր կնոջ վրա ամենից շատ ընկնում ե այդ աշխատանքը՝ այն և կազմելու այդ հիմնարկները: Պետք ե խոստովանել, վոր մեզ մոտ Ծուսաստանում այդպիսի հիմնարկություններ, վորոնք կողնեյին կնոջը դուրս գալ այդ տնային ստրուկ դրությունից շատ քիչ ե... Բայց և այնպես պետք ե ասել, վոր այդ հիմնարկությունները, վոր ազատում են կնոջը տնային ստրուկ դրությունից առաջանում ե ամեն տեղ, վորտեղ վոր մի փոքր հնարավորություն կա դրա համար»: (Լենին):

Յերեխաների դաստիարակման ասպարեզում, պատգամավորուհին պետք է պայքարի նոր, յերե-

խաների հաստրակական դաստիարակության, հինգ
ձեռի դաստիարակության դուրս զցելուն—ծեծե-
լուն, յերեխաներին հայհոյելուն և այլն։ Այստեղ
նրան կողնեն պիտներների պատանեկական կազ-
մակերպությունները և նախադպրոցական հրապա-
րակները։

«Մենք ունենք ընդհանուր վիճակագրական տե-
ղեկություններ, վորոնց չնորհիվ կարելի յե ասել,
վոր նախադպրոցային հիմնարկներում դոյություն
ունեն, և գոյություն ունեն վոչ միայն քաղաքում
այլ և գյուղում, բայց մենք չենք կարող հասնել
նրան, վոր ամեն մի գավառում, ընդգծում եմ ամեն
մի գավառում գոյություն ունենա որինակելի նա-
խադպրոցական հիմնարկություն։ Մենք այժմ չենք
կարող հասնել նրան, վոր ամեն մի շրջանում լինի
գոնե մեկ մանկական հրապարակ։

... Յես պետք ե ասեմ, վոր դաստիարակու-
թյան խնդիրները, այսինքն վերադաստիարակել
ազագա սերունդը կովեկտիվ ուղղությամբ, չեն
կարող իրականանալ առանց նախադպրոցական
կրթություն»։ (Լունաչարսկի, «Լուսավորություն
և հեղափոխություն»)։

Պատգամավորուհին պետք ե գեղջկուհուն և
դյուզի բոլոր ազգաբնակությանը բացատրե, վոր
խորհրդային իշխանությունն ամեն կերպ ձգտում է
ամեն տեսակի բժշկական ողնություններ տարա-

ծել գյուղացիության մեջ։ Վերջերքս Առժողկոմատի միջոցով հրատարակված և կարդադրություն՝ ապահովագրվածների և գյուղացիների ըրջանային բուժիչ վայրերի ընդունման կարգի սահմանման մասին։

Գյուղացին և գեղջկուհին ապահովագրվածներին հավասար ողնություն պետք և այժմս ստանաշրջանային և գավառային բուժիչ հիմնարկներում, պետք և ստանա հատուկ տեսակի ողնություններ։

Գյուղական աղքարնակությանը կուրորտային ողնությունը դեռ տրվում եր անցյալ տարվանից, բայց նկատված են դեպքեր, յերբ գյուղացիներին տրված տեղերը բռնել են, վոչ թե հողագործ—մաճկալ գյուղացիները, այլ գյուղական հիմնարկների ծառայողները։ Դրա համար Առժողկոմատը կատեղորիկ կերպով առաջարկեց բոլոր ընտրող հանձնաժողովներին, վոր կուրորտ ուղարկեն բացառապես այն գյուղացիներին և դեղջկուհիներին, վորոնք պարապում են գյուղատնտեսությամբ։ (Պրավդա, 10 հուլիսի, 1926 թվի № 156 (3385)։

Խորհրդային իշխանությունը և կոմունիստական կոուսակցությունը աշխատում են, վոր մեր գյուղը դառնա կուլտուրական, առողջ և կուշտ։ Պատղամավորուհին պետք և իշխանության բոլոր մարմիններին այդ խնդրում ողնի։ Բնկ. Լենինք սուել ե. «Մենք սկսեցինք մեծ պատերազմը, վորք

մենք շուտ չենք վերջացնիւ այդ աշխատավոր բանակի անարյուն պայքարն եւ ընդդեմ սովածության և թափիթիվածության, լուսավոր, կուշտ և առողջ մուսաստանի համար, բայց մենք այդ պատերազմը կվերջացնենք այնպիսի վճռական հաղթանակով, ինչպես վերջացրինք սովորակ բանակայինների դեմ սպայքարը»։ (Լենին)։

ՆՅՈՒԹԵՐ 12-ՐԴ ԶԲՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Մինչեւ այժմս գյուղացիության մեջ հատկապես գեղջկուհիները կիսագրավետներ են և անգրագետներ։ Այդ բացատրվում ենրանով, վոր ցարիզմի ժամանակ կրթությունը և մինչեւ անդամ հասարակ դրագիտությունը մատչելի յեր կարվածտերերի, կուլակների, գործարանատերերի և քահանաների յերեխաներին։ Թագավորին և կալվածատերերին ոգտավետ եր գյուղացիներին պահել խավարի և տղիտության մեջ, նրա համար, վորպեսպի հեշտ լինի նրան շահագործել։

«Առաջին խորհրդ, վոր տիրող գասակարգի կառավարությունը դնում եր իր առաջ, հանդիսանում է այն վորպեսպի ներքին խավերը լինեն դարդացած, վոր նրանց մեջ չտարածվի քննդատական միտքը։ Յերբ խոսքը վերաբերում է այնպիսի յերկրին, ինչպիսին եւ մուսաստանը, ապա այդտեղ ցարական ուժիմի, ժողովրդական յուսավորու-

թյան մինիստրը մինչև վերջը հանդիսանում է ըստ Շքեղրինի արտահայտության. «Ժողովրդական մըթագնության մինիստր»:

...Բուրժուազիան և' միջնակարդ դպրոցը կործանեց, վորովհետեւ նա այդտեղ դաստիարակեց յերեխաներին դաստիարակեց այնպես, վորապեսղի նրանք լինեն կապիտալիստներ, կամ նրանց կամակատարներ, ներշնչեց սեփականատիրական զգացմունք տնտեսության վրա, այսինքն՝ մարդակերություն, զգվելի վերաբերմունք դեպի բանվորները, վարակեց լատինականության մտքով և կազմաբայի վոդի ներշնչեց, նամանավանդ խեղաթյուրված եյին ժողովրդական ստորին դպրոցները, վորտեղ ամբողջ դործը հավասարվում եր նրան վոր տալ նվազադույն դիտելիք և վորքան հնարավոր և շատ տալ կրոնի՝ և դունավորված պատմության, վորտեղ սովորեցնում եյին հայրենասիրություն և անձնվերություն՝ դեպի իշխանությանն ու տերերը»: (Լունաչարսկի):

Աղջիկների հերթական դործն ավելի վատ եր: Գյուղում կարծում եյին, վոր աղջկան գրադիտություն պետք չի, վոր աղջիկը պետք ե աշխատի տանը և դաշտում, մինչև ամռանալը, իսկ նրա համար վորապեսղի յերեխաներ խնամի, նրան դրդիտություն պետք չե: Աղջիկները մեծ մասմբ չեյին սովորում և նրանք մեծացան խավարի և տղի-

տության մեջ։ Գեղջկուհիների անդրադիառւթյունը մինչև հիմա խանգարում է նրանց ընդհանուր քաղաքական կյանքին մասնակցելուն։ Նրանց խանգարում և լրիվ կերպով ողտվելու «Հոկտեմբերյան հեղափոխության» նվաճած իրավունքներից։ Հոկտեմբերյան հեղափոխությունը խորտակեց կարվածառերին և թագավորին և գիտությունը դարձրեց աշխատավորության սեփականություն։

«... Ժողովրդական լուսավորության ասպարեզում. —ասում ե Վլադիմիր Իլիչը. —Ռ. Կ. Կ. ծրագիրը խնդիր և դրել հասցնել հոկտեմբերյան հեղափոխության 1917 թվի դործը մինչև վերջ, բուրժուազիայի դասակարգային գործիք դպրոցից դարձնել դասակարգերի բաժանման լրիվ վերացման գործիք, հասարակության կոմունիստական վերածնունդի դործիք»։

Հատուկ նշանակություն ունի կիսադրագիտության և անդրադիտության լիկվիդացիայի խրնդիրը։

«Քանի դեռ մեր յերկրում կա այնպիսի յերեվույթ ինչպիսին և անդրադիտությունը, քաղաքական լուսավորության մասին դժվար է խոսել։ Անգրագետ մարդը, քաղաքականությունից դուրս է կանգնած։ Նրան սկզբում ոկտրք է սովորեցնել այրութեն։ Առանց դրան չի կարող լինել քաղաքականություն, առանց դրան միայն բամբասանքն է,

հեքիաթ ե, նախապաշարմունք ե, բայց վոչ քաղաքականություն։ Անգրագետ յերկրում կոմունիստական հասարակություն ստեղծել չի կարելլ»։ (Լենին)։

Գեղջկուհին խորհրդային իշխանության որոք սովորելու հնարավորություն ունի, բոլոր դպրոցներում, սկսած ստորինից մինչև բարձրադույնները։ Առաջին հերթին հասակավոր դեղջկուհին, պետք ե սովորի գրադիտություն, պետք ե լիկվիդացիայի յենթարկել կիսագրադիտությունը։ Յերիտասարդությանը պետք ե ուղարկել դյուզական յերիտասարդության դպրոցները, վորոնք կողնեն նրանց կառուցելու իրանց տնտեսությունը նոր հիմունքներով։

Գյուղական յերիտասարդության դպրոցներ

«Գյուղական յերիտասարդական դպրոցների կառուցման գործն ընդամենը յերկու տարի՝ յեայդ դպրոցները պետք ե գյուղական յերիտասարդությունից պատրաստեն կուլտուրական հողագործներ, վորոնք կոռպերացման հենքունությունները, և հանդիսանալու յեն գյուղի ակտիվ հասարակական աշխատողներ։

Գյուղյերիտ դպրոցների առաջ դրված են հետեւյալ խնդիրները՝ 1) բարձրացնել կուլտուրական ժակերիութը՝ առաջի հերթին դյուղի չքավոր ե-

միջակ չերտերի, այսինքն գյուղի այն խավերի, վորոնք մինչև հիմա ամենից շատ զրկված են յեղել գրադիտությունից՝ կուլտուրայի խմասում։

2) Միացնել ընդհանուր զարգացումը գյուղատնտեսական գիտելիքների հետ և դրա միջոցով ովնել գյուղացիությանը գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնելու գործում։

3) Յերիտասարդությանը սովորեցնել միասին աշխատանքի, սովորեցնել նրա ինչպիսի ճանապարհներով և ձեւերով ոլիտի կոռապերացման յենթարկել գյուղը։

4) Յերիտասարդությանը նախազարտասուել ակտիվ հասարակական գործունեյության (խորհուրդների, փոխողկոմների, քաղլուսվարակոն և այլն)։

Այսպիսով ըստ իրենց խնդիրներով Գ. Յ. Դ. ներկայացնում են իրենցից գլորոցների նոր տիպ, վորտեղ ընդհանուր զարգացումը կատված և արտադրական աշխատանքի և սովորողների հասարակական աշխատանքի հետ և դպրոցի վողջ աշխատանքը գնում և այն ուղղությամբ, վորագեսղի ձեռք առնեն ուժեղ մասնակցություն ընդհանուր շինարարության, գյուղատնտեսության բարձրացման, գյուղում սոցիալիստական շինարարության գործին»։ Բանֆակներում, տեխնիկումում և բարձրագույն դպրոցներում, սովորում են գլխավորա-

ողիս բանվորների, գյուղացիների վորդիները:

«Գործը վերջիվերջո կայանում և նրանում, վոր մեր յերկիրը բանվոր գասակարգի և գյուղացության յերկիր և, և մենք նրանց բանվորներին և գյուղացիներին բարձրագույն դպրոցներ ենք թողնում 75—80%-ով։ Նրանք ունեն գրահամար լրիվիքավունք, նրանք կատարեցին հեղափոխությունը. ՄԵնք տեղ ենք տալիս առաջին հերթին ամենուրնգունակ, ողատրաստված բանվորներին և գյուղացիներին, իսկ մնացած տեղերը բաշխում ենք ինտելիգենցիայի մեջ») (Լունաշարսկի):

Առեհրդային իշխանությունը ցույց է տալիս հոգու և ոգնություն գյուղացիությանը, առաջ քաշելով նրանց դպրոցները, տալով՝ արտօնություններ բնկանելության ժամանակ:

Գեղջկուհին, մանավանդ պատղամամավորութին, ողետք և ձկոտի սովորելու հիշելով, վոր դրագիտությունը պետք է տնտեսության ճիշտ վարելու և հասարակական-քաղաքական կյանքին մտնալու համար։

Գեղջկուհին ողետք և աշխատի դպրոցական խորհուրդներում, հետեւ վարպեսզի գպրոցները լինեն ապահովված ամեն տեսակի անհրաժեշտ պիտույքներով, վորպեսզի ուսմունքը չտարվի հինգեթողով։

Քաղլուս աշխատանքների կենտրոնը գյուղում

Հանդիսանում եւ խրճիթ-ընթերցարանը : Պատգամավորուհին պետք եւ հաճախ այնտեղ լինի ոզնի գեղջկուհու հատուկ որ կազմելուն :

Խրճիթ-ընթերցարանը կողնի անդրագիտության վերացմանը, կողնե կարեոր և անհրաժեշտ գիտելիքներ և տեղեկություններ ստանալուն : Խրճիթ-ընթերցարանում կարելի յէ կազմակերպել գեղջկուհու համար լավ հանդստի վայր : Խրճիթ-ընթերցարանը կազմակերպում երածքը ընթերցում կիսագրագետների և անդրագետների համար (լրադիր, դրաբույկ գյուղատնտեսության վերաբերյալ և այլն) : «Խրճիթ-ընթերցարանը նպաստում եւ կազմակերպելուն «Կորչի անդրագիտությունը» բջիջներ, քաշերով նրանց մեջ կուսակցական, արհմիութենական, խորհրդային աշխատակիցներ և ակտիվ գյուղացիներ» : (Գլխադրուսվարի վորոշումներից) :

Ամբողջ Ռ.Ս.Ֆ.Խ:Հ. կա 5781 խրճիթ-ընթերցարան : Գրքերը, լրագրերը, ամսագրերը ունեն հսկայական նշանակություն գեղջկուհուն զարգացնելու դորձում, բարձրացնելու նրա քաղաքական և կուլտուրական մակարդակը :

Բնկ. Լենինը տսում եր, վոր լրագիրը վոչ միայն կոլլեկտիվ պրոպագանդիստ եւ կոլլեկտիվ ագիտատոր այլ և կազմակերպիչ :

Մեզ մոտ մասսան քիչ և գաստիարակված կեն-

դանի կոնկրետ որինակներում և այդ կյանքի բոլոր ասպարեզներում այն եւ, այս եւ մամուլի գլխավոր խնդիրը կապիտալիզմից գեղի կոմունիզմին անցման շրջանում :

Մեզ մոտ քիչ են ուշադրություն գարձնում հրապարակով հայտարարությունների, հասարակական քննադատության, վատի վոչնչացման և լավից սովորելու կոչի վրա»: (Լենին):

XIII Կուս-համագումարը 1924 թվի մայիսին նկատի առավ գյուղացիության մամուլի հաջողությունները և ապագայի համար տվեց վորոշ խնդիր՝ մի լրագիրը տասը գյուղական ծուխի:

Մեծ նշանակություն ունի գեղջկուհու համար «Հայաստանի Աշխատավորուհի» ամսաթերթը: Նա կգրավի նրան զեղպի հասարակական-քաղաքական կյանքը, կպատմի ու կծանոթացնի նրան իրա իրավունքների, և պարտականությունների մասին, ցույց կտա նրան ինչպես են ապրում և աշխատում նրա քույերը ամբողջ Միության մեջ: Բայց գեղջկուհին պետք է վոչ միայն լրագիրը և ամսագիրը կարդա, այլ նա պետք է գրի և նրա մեջ: Նա պետք է դառնա գյուղթղթակից: Գեղջկուհին պիտի իր մտքերը լրագրի միջոցով հաղորդի ուրիշներին, հոգորդելով թե ինչ լավ և վատ բան եւ կատարվում իրենց գյուղում: Լրագրի միջոցով կարող է կովել կուլակի, գյուղում կատարած ճնշումների դեմ,

յերբեմն կոռագերացիայի վոխով կոմների և այլն:
Լրագրում նու պետք է գրի ընդհանրապես գյուղի
կուլտուրական շինարարության մասին:

Այժմ ամբողջ Խ.Ս.Հ.Մ.-ի մեջ բան-թղթակից-
ների և գյուղ-թղթակիցների թիվը հասնում է
250.000-ի: Կին բան-թղթակիցների և գյուղ-թրղ-
թակիցների թիվը գեռ չառ չնչին է, վորոնք հա-
մախմբված են կանանց ամսաթերթերի շուրջուն:
Այդպիսի ամսաթերթերի թիվը ամբողջ Խ.Ս.Հ.
Մ.-ի մեջ 15 որինակ—300.000 տիվաժով:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038725